«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԲԵՐԴԻ ԲԱՁՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Բերդի բազմագործառութային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԲԲՊՔ, ՄՈՒՀ կամ Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ): Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12

- ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 12
- ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 15

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 17

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 27

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 31

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 35

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 37

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 42

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 44

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 47

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 51

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 52

- ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 52
- ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 53
- ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 55
- ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 56
- ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 57
- ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 57

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

«Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ձևավորվել է 2019թ., վերջինս Բերդի արհեստագործական պետական ուսումնարանի (հիմնադրված 1972թ.) և Բերդի պետական քոլեջի (հիմնադրված 1981թ.) իրավահաջորդն է: Այն տեղակայված է Տավուշի մարզի Բերդ քաղաքում:[1]

ԲԲՊՔ-ն իրականացնում է նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր և ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն անցնում է առաջին անգամ:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Բերդի բազմագործառութային պետական քոլեջը Բերդ խոշորացված համայնքում միակ մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունն է, որտեղ կրթություն է ստանում 317 ուսանող: Քոլեջն իր կրթական գործունեությունն իրականացնում է իրարից մինչև երեք կիլոմետր հեռավորության վրա տեղակայված երեք մասնաշենքերում: Համաձայն Բերդ խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի՝ համայնքի հիմնական զարգացման ոլորտներ են զբոսաշրջությունը, ձեռներեցությունը և գյուղատնտեսությունը:

Բերդի բազմագործառութային պետական քոլեջն ունի թույլտվություն իրականացնելու 18 կրթական ծրագիր, որոնցից 11-ը՝ միջին մասնագիտական, 7-ը՝ նախնական /արհեստագործական/: 2024-2025 ուստարվա առաջին կիսամյակի դրությամբ Քոլեջն ունեցել է ընդունելություն 7 միջին մասնագիտական կրթական ծրագրերում, դրանք են՝ «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն», «Անասնաբուժություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Դեղագործություն», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Շուկայաբանություն» մասնագիտություններով: Նախնական (արհեստագործական) լիցենզավորված 7 ծրագրերից ՄՈՒՀ-ում գործում է 6-ը՝ «Խոհարարական գործ», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ավտոէլեկտրիկ)», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ավտոնորոգող)», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Համակարգիչների շահագործում», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»: Քոլեջը կազմակերպում է նաև հեռակա ուսուցում՝ «Մենեջմենթ», «Նախադպրոցական կրթություն» և «Դեղագործություն» կրթական ծրագրերով:

2023-2024 ուստարում Քոլեջում ներդրվել է նաև դուալ կրթության համակարգը «Անասնաբուժություն» մասնագիտությամբ, իսկ 2024-2025 ուստարում նույն մոդելով մեկնարկել է նաև «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագիրը: Կրթական ծրագրերի մեծ մասը բխում են համայնքային առաջնահերթություններից: Քոլեջում դասավանդում են 36 դասախոս, 5 արտադրական ուսուցման վարպետ, որից միայն 4-ն են պրակտիկ ոլորտի մասնագետներ[2]:

Շրջանավարտների հետագծի վերաբերյալ վերլուծությունը ցույց է տալիս հետևյալ հիմնական միտումները[3]՝

---

[1] Տվյալները վերցված են ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունից

[2] Տվյալները տրամադրվել են ՄՈՒՀ-ի կողմից

[3] Տվյալները վերցված է Քոլեջի շրջանավարտների բազայից

Բուհում ուսումը շարունակող շրջանավարտներ	Աշխատանքով զբաղված շրջանավարտներ
• 2021-2022 ուստարում՝ 15% • 2022-2023 ուստարում՝ 22% • 2023-2024 ուստարում՝ 29%	• 2021-2022 ուստարում՝ 35% (որից 21% մասնագիտությամբ) • 2022-2023 ուստարում՝ 37% (որից 23% մասնագիտությամբ) • 2023-2024 ուստարում՝ 33% (որից 16% մասնագիտությամբ)
Բանակ զորակոչված շրջանավարտներ	**Գործազուրկ շրջանավարտներ**
• 2021-2022 ուստարում՝ 31% • 2022-2023 ուստարում՝ 26% • 2023-2024 ուստարում՝ 22%	• 2021-2022 ուստարում՝ 17% • 2022-2023 ուստարում՝ 13% • 2023-2024 ուստարում՝ 16%

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Բերդի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում, բացի այդ որակի ապահովման մշակույթը դեռևս ձևավորման փուլում է:

Քոլեջի առաքելությունն է՝ «գիտելիքի ստեղծումը, փոխանցումը, տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից՝ քոլեջը խթանում է իր ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը: Քոլեջը մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ուսուցման՝ հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի, մասնագիտական կարիերայի և հարատև ուսումնառության՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան»: Քոլեջն իրականացնում է կրթություն ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան:

Փորձագիտական խումբը ընդգծում է, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջը, որպես միավորված ուսումնական հաստատություն, կարողացել է ձևավորել կառավարման միասնական և արդյունավետ համակարգ, որն ապահովում է հաստատության շարունակական և համակարգված զարգացումը: Կառավարման համակարգը առանձնանում է գործառույթների հստակ տարանջատմամբ և համագործակցային մոտեցմամբ, ինչը նպաստում է կազմակերպչական գործընթացների արդյունավետ իրականացմանը: Հատկանշական է նաև, որ Քոլեջի ղեկավար անձնակազմը ունի նախաձեռնողական մոտեցում մշտապես ներգրավլու այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ՝ դրամաշնորհների և նվիրատվությունների միջոցով, ինչը էականորեն նպաստում է հաստատության զարգացմանը և բարելավմանը:

Քոլեջի 2020-2024թթ. Ռազմավարական ծրագիրը սահմանում է Քոլեջի նպատակները: Սակայն նպատակների արդյունավետ իրագործման համար խումբը անհրաժեշտ է համարում հստակ գործողությունների պլան-ժամանակացույցի և չափելի արդյունքային ցուցանիշների սահմանումը, որը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին բարելավելու ռազմավարական կառավարումը: Դրական է, որ Քոլեջում կառավարչական որոշումների կայացման գործընթացում ներգրավված են ներքին շահակիցները, ինչը նպաստում է նրանց միջև հաղորդակցման և համագործակցության արդյունավետությունը: Այս հանգամանքը կարևորվում է թե՛ ռազմավարական ծրագրի նպատակների և առաքելության իրականացման, թե՛ մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) շարունակական բարելավման տեսանկյունից: Միաժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ ՈԱ (որակի ապահովման) աշխատանքները պետք է կենտրոնացած լինեն տվյալների համակարգային և պարբերական հավաքագրման ու վերլուծության վրա, ինչը թույլ կտա ընդունել տվյալահենք որոշումներ՝ հիմնված քոլեջի խոշոր ձեռքբերումների և առկա խոչընդոտների վրա: Այս տեսանկյունից կարևորվում է որակի ներքին

ապահովման համակարգի կայացումը, ինչպես նաև գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների ու գործիքակազմերի ներդրումը:

Բերդի բազմագործառութային պետական քոլեջն առաջարկում է 13 գործող միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ծրագիր, որոնք տարբեր ուղղվածությամբ են և հիմնականում ապահովում են տարածաշրջանը մասնագիտական ռեսուրսով: Քոլեջն ակտիվ համագործակցում է տարածաշրջանի գործատուների հետ՝ նպատակ ունենալով պատրաստել աշխատաշուկայում պահանջված մասնագետներ: Ուսանողների գործնական հմտությունների զարգացումն ապահովելու նպատակով՝ ՄՈՒՀ-ը նախաձեռնել է նաև երկու կրթական ծրագրի իրականացումը դուալ ձևաչափով: Սակայն փորձագիտական խումբը շեշտադրում է, որ կրթական ծրագրերի շարունակական և համակարգային բարելավման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել կրթական ծրագրերի մշտադիտարկման գործիքակազմ, որը կօգնի ոչ միայն դուալ, այլև մյուս կրթական ծրագրերի կայուն արդյունավետության գնահատմանը և շարունակական բարելավմանը:

Վերջին տարիներին քոլեջը որդեգրել է դասախոսական կազմի համալրման և երիտասարդացման ռազմավարություն, որի շրջանակներում ներգրավվում են նաև գործատուների ներկայացուցիչներ: Փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի քաղաքականությունը գործատու-դասախոսներ ներգրավելու ուղղությամբ՝ ապահովելով ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը:

Դասախոսական կազմի համար իրականացվող մասնագիտական վերապատրաստումներն ու մեթոդական աջակցությունը հնարավորություն են տալիս ինտեգրել ժամանակակից դասավանդման մեթոդներ, որոնք նպաստում են դասավանդման որակի շարունակական բարելավմանը: Սակայն, փորձագիտական խմբի գնահատմամբ, անհրաժեշտ է խորացնել և ընդլայնել վերապատրաստման միջոցառումները՝ դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների թիրախային զարգացման և արդիականացման նպատակով՝ անհրաժեշտության դեպքում տրամադրելով նաև ֆինանսական ռեսուրսներ: Միաժամանակ կարևոր է ներդնել դասախոսների գնահատման թափանցիկ և հստակ մեխանիզմներ, որոնք կապահովեն նրանց մասնագիտական աճի շարունակականությունը և կրթական գործընթացի արդյունավետությունը:

ՄՈՒՀ-ը հետևողականորեն բարելավում է իր նյութատեխնիկական բազան՝ ներառյալ մասնագիտական լաբորատորիաները և մասնագիտական լսարանները՝ նպատակ ունենալով ապահովել կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ գործող կրթական ծրագրերը, դասախոսական կազմը, առկա ռեսուրսները հիմնականում հիմնականում հնարավորություն են տալիս ապահովել շրջանավարտների արժանահավատությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջում ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանն ուղղված նախաձեռնությունները, որոնց շրջանակներում ուսանողները ներգրավվում են կառավարման ուսանողական խորհուրդների աշխատանքներում, մասնագիտական կողմնորոշման միջոցառումներում, հմտությունների զարգացմանը միտված ծրագրերում, ինչպես նաև սոցիալական և դրամաշնորհային նախաձեռնություններում: Միևնույն ժամանակ, խումբը շեշտադրում է ուսանողների ներգրավման կարևորությունը հետազոտական գործունեությունում, ինչը ներկայումս Քոլեջում բավարար չափով չի խրախուսվում: Հետազոտության և ուսումնառության փոխկապակցման գործուն մեխանիզմների ներդրումը

կխթանի կրթական ծրագրերի շարունակական զարգացմանը և կխորացնի ուսանողների վերլուծական կարողությունները: Չնայած որոշակի հետազոտական աշխատանքներ իրականացվում են, օրինակ՝ «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ի շրջանակներում, խումբը կարեւորում է հետազոտության գործընթացներում ուսանողների և դասախոսների համատեղ ներգրավման խրախուսումը:

Փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի հասարակական պատասխանատվության դրսևորումը, որն արտահայտվում է հասարակության տարբեր շերտերի համար գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցով կազմակերպվող տարբեր միջոցառումների ձևաչափում: Այս նախաձեռնությունները, որոնցում ակտիվ ներգրավվածություն ունեն ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները, նպաստում են Քոլեջի հեղինակության բարձրացմանն ու ճանաչելիությանը: Այնուամենայնիվ, կայքէջի բացակայությունը սահմանափակում է Քոլեջի մասին տեղեկատվության լայն տարածումը և ինստիտուցիոնալ գործընթացների վերաբերյալ թարմ և օբյեկտիվ տեղեկատվության հասանելիությունը ավելի լայն լսարանների համար:

Քոլեջը հետևողականորեն զարգացնում է արտաքին կապերը՝ համագործակցելով տեղական գործատուների, հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների հետ: Սակայն միջազգային ծրագրերում ներգրավվածության խթանման հիմնական խոչընդոտներից է անգլերեն լեզվի ոչ բավարար իմացությունը, ինչը խոչընդոտում է Քոլեջի ամբողջական ինտեգրումը միջազգային կրթական նախաձեռնություններում: Խումբը կարևորում է դասախոսական, վարչական և ուսանողական կազմի լեզվական հմտությունների բարելավմանն ուղղված օտար լեզվի դասընթացների կազմակերպումը, ինչը զգալիորեն կխթանի Քոլեջի հնարավորությունները՝ ընդլայնելու համագործակցության շրջանակները և արդյունավետորեն ներգրավվելու միջազգային ծրագրերում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Կառավարման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որոշումների կայացմանը:
2. Աշխատակիցների գործառույթների հստակ տարանջատումը՝ ըստ պաշտոնի նկարագրերի և իրականացրած գործունեության:
3. Թիմային աշխատանքի առկայությունը և ստորաբաժանումների համագործակցությունը անկախ տարբեր շենքերում գործունեություն ծավալելու հանգամանքից:
4. Ղեկավար անձնակազմի նախաձեռնողականությունը Ֆինանսական դիվերսիֆիկացված հոսքերի ապահովման ուղղությամբ:
5. Ուսանողներին սոցիալական և դրամաշնորհային ծրագրերում ներգրավելու փորձառությունը:
6. Կադրերի արդյունավետ ընտրությունը և ՄՈՒՀ-ի ունեցած մենթորության քաղաքականությունը:
7. Բոլոր ՄԿԾ-ների իրականացման համար հիմնականում բավարար ռեսուրսային բազայի առկայությունը:
8. Քոլեջի հասարակական և սոցիալական ակտիվությունը:
9. Քոլեջի ունեցած գործընկերների լայն շրջանակը, որը նպաստում է քոլեջի աշխատանքների առաջխաղացմանը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական ծրագրի և պլանային ժամանակացույցի միջև ոչ հստակ փոխկապակցվածությունը, ինչպես նաև գնահատման առանցքային ցուցանիշների ոչ հստակ սահմանումն ու ամբողջական լինելը։
2. Կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման համակարգային մեխանիզմների պակասը և ՄԿԾ-ների բարելավման դանդաղ տեմպերը։
3. ՈԱ համակարգի ներդրման փուլում գտնվելը և հստակ արդյունքների բացակայությունը։
4. Որոշումների կայացման հիմքում ոչ միշտ վերլուծված տվյալներ ունենալը։
5. ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների ոչ ամբողջական կապակցվածությունը ՌԾ նպատակներին, ինչպես նաև դրանցում վերլուծական տվյալների սակավությունը։
6. Հետազոտական բաղադրիչը ոչ բոլոր կրթական ծրագրերում ներդրված լինելը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Հստակեցնել Քոլեջի առաքելությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով տնտեսության պահանջներին համահունչ և մրցունակ մասնագետների պատրաստման առաջնահերթությանը։
2. Հաջորդ ռազմավարական ծրագրի մշակման հիմքում դնել նախորդ ՌԾ-ի գնահատման արդյունքները, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների կարիքները՝ սահմանելով գնահատման չափելի որակական և քանակական առանցքային ցուցանիշներ, ծրագրի իրականացման հստակ ժամկետներ, պատասխանատուներ և ֆինանսական միջոցներ։
3. Ներդնել ռազմավարական ծրագրի մշտադիտարկման մեխանիզմներ՝ պարբերաբար գնահատելով ՌԾ նպատակների ձեռքբերումը։
4. Վերանայել Քոլեջի կազմակերպական կառուցվածքը՝ հստակեցնելով ստորաբաժանումների հիերարխիկ կապերն ու դրանց համապատասխան մարդկային ռեսուրսների տեղաբաշխումը՝ ապահովելով կառավարման առավել մեծ արդյունավետություն։
5. Շարունակել եկամուտների ներգրավման այլընտրանքային մեխանիզմների մշակման և կիրառման գործընթացը՝ նպատակ ունենալով ապահովել Քոլեջի շարունակական առաջընթացն ու կայունությունը։
6. Վերանայել որակի ապահովման համակարգը՝ վերջինիս համապատասխան՝ մշակելով բարեփոխման հստակ գործողություններ և պլան-ժամանակացույց։
7. Մշակել և ներդնել տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ, որոնք կնպաստեն կարիքների վերհանմանը և օբյեկտիվ վերլուծությունների իրականացմանը։
8. Իրականացնել կարողությունների զարգացման միջոցառումներ ՈԱ գործընթացների շրջանակներում ներգրավված աշխատակիցների համար՝ ապահովելով ՈԱ գործընթացների ճիշտ ընկալումը և ՈԱ համակարգի կայացումը։
10. Իրականացել ՈԱ գործընթացների հստակ պլանավորում՝ սահմանելով ակնկալվող արդյունքներ, ժամկետներ, պատասխանատուներ։

Որակավորումների արժանահավատ շնորհում

11. Մշակել և ներդնել հստակ քաղաքականություն և մեխանիզմներ ՄԿԾ-ների շարունակական մշտադիտարկման և վերանայման համար՝ հիմնված աշխատաշուկայի կարիքների խորքային վերլուծությունների, ուսանողների և գործատուների հետադարձ կապի, ինչպես նաև ՄԿԾ-ների իրականացման արդյունքների վրա։
12. Մշակել և ներդնել հստակ և թափանցիկ գնահատման համակարգ բոլոր կրթական ծրագրերի շրջանակում՝ ընդգրկելով գործնական առաջադրանքների, պրակտիկաների և ամփոփիչ ատեստավորման գործընթացները։
13. Մշակել և ներդնել բենչմարքինգի իրականացման քաղաքականություն ՝ իրականացնելով ՄԿԾ-ների համեմատություններ այլ ուսումնական հաստատությունների հետ՝ նպաստելով ծրագրերի բովանդակության արդիականացմանը և նորարարական մոտեցումների ներդրմանը։
14. Գտնել և իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ դասախոսական կազմի համար՝ նախապես վեր հանելով դասախոսի մասնագիտական կարիքները։
15. Բազմազանեցնել դասախոսական անձնակազմի գնահատման մեխանիզմները՝ ապահովելով օբյեկտիվ և բազմակողմանիորեն ստուգված արդյունքներ։
16. Հաշվարկել յուրաքանչյուր ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները (1 ուսանողի համար)՝ իրականցնելով ՄԿԾ-ների իրականացման առավել արդյունավետ պլանավորում։
17. Բարելավել ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմները, մասնավորապես, վերանայել ՈՆԱ-ի կողմից մշակված, ռեսուրսներից բավարվածության մակարդակը որոշող հարցաշարերը՝ ներառելով որակական տվյալներ վերհանող հարցեր։

Երկարաժամկետ զարգացում

18. Ընդլայնել ուսանողների ներգրավվածությունը տարբեր սոցիալական, հասարակական և դրամաշնորհային ծրագրերում՝ նպաստելով ուսանողների ձեռնակատիրական և հասարակական մտածողության ձևավորմանը։
19. Դիտարկել ուսանողների համար լրացուցիչ սեմինարների, օտար լեզուների զարգացման պարապմունքների, մոտիվացիոն հանդիպումների հաջողության հասած մասնագետների հետ հանդիպումների կազմակերպումը՝ կապեր հաստատելով նաև Երևանում գտնվող կազմակերպությունների, հաջողության հասած անձանց հետ՝ նպաստելով ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և փոխանցելի հմտությունների զարգացմանը։
20. Բոլոր կրթական ծրագրերում հստակեցնել հետազոտական գործունեության հնարավոր հիմնական ուղղությունները՝ դրանց հիման վրա մշակելով և ներդնելով ուսանողների համար հետազոտական բնույթի առաջադրանքներ։
21. Դասախոսական կազմի համար ներդնել հետազոտական գործունեության խթանման մեխանիզմներ՝ ապահովելով համապատասխան պայմաններ և խրախուսման գործիքներ։

22. Ներդնել հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ՝ ապահովելով վերջիններիս վերլուծականությունը և կապը ռազմավարական ծրագրի հետ։
23. Կարճաժամկետ կրթական ծրագրեր ներդնելիս իրականացնել շուկայի կարիքի խորքային վերլուծություններ՝ ապահովելով դրանց պարբերականությունը և շարունակականությանը։
24. Կազմակերպել օտար լեզվի բարելավման ինտենսիվ դասընթացներ ուսանողական և դասախոսական համակազմերի համար՝ ընդլայնելով միջազգային ծրագրերում ներգրավվելու հնարավորությունները։

_____

Նարինե Սիրականյան
Փորձագիտական խմբի ղեկավար

24-ը փետրվարի, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[4] կողմից.

1. **Նարինե Միրականյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Նաիրա Արշակյան՝** Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
3. **Ելենա Մարտիրոսյան՝** Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
4. **Ալբերտ Թադևոսյան՝** Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Ֆինանսներ բաժնի 2-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ: Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը:** Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Բերդի բազմագործառութային պետական քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 1-ը փետրվարի 2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Բերդի բազմագործառութային պետական քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել (նշված է 2024թ. համար): Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։
Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 09-ը օգոստոսի 2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[5]:

Նախնական այց

31-ը հոկտեմբերի 2024թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել նոյեմբերի 4-6-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսների դիտարկում[6], փաստաթղթերի ուսումնասիրություն[7] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

---

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[6] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[7] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Փորձագիտական նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 23-ը հունվարի 2025թ.: Ուսումնական հաստատությունը նախնական զեկույցում նշված փաստերի վերաբերյալ դիտարկումներ չի ունեցել: Փորձագիտական խումբը զեկույցը վերջնականացրել և ՄՈՒՀ-ին է ներկայացրել 24-ը փետրվարի 2025թ.:

_____

Անահիտ Տերտերյան
Փորձագիտական խմբի համակարգող

24-ը փետրվարի, 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Փաստեր: Բերդի բազմագործառութային պետական քոլեջը պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 2019թ.-ին Բերդի արհեստագործական պետական ուսումնարանի և Բերդի պետական քոլեջի միավորման արդյունքում: Քոլեջի առաքելությունը ձևակերպված է 2020-2024թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): «Քոլեջի առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը, տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից՝ քոլեջը խթանում է իր ուսանողների և դասախոսների մտավոր և անձնային որակների զարգացումը: Քոլեջը մշտապես ձգտում է գերազանցության և նորարարության ուսուցման՝ հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ Քոլեջը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի, մասնագիտական կարիերայի և հարատև ուսումնառության՝ գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թե ներքին, թե արտաքին շահակիցները որպես ՄՈՒՀ-ի հիմնական առաքելություն դիտարկում են տնտեսության կարիքներին համապատասխան մրցունակ մասնագետի պատրաստումը: Հարկ է նշել, որ այդ գաղափարը առաքելության մեջ հստակ շեշտադրված չէ:

ԲԲՊՔ-ն կազմակերպում է կրթություն ՈԱՇ-ի 4-5-րդ մակարդակներին համապատասխան: ՄՈՒՀ-ն ունի լիցենզիաններ 18 միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագիր իրականացնելու, որոնցից 11-ը միջին մասնագիտական են, իսկ 7-ը՝ նախնական արհեստագործական:

ՌԾ-ն սահմանում է 19 նպատակներ, որոնցից են կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումները արդի կրթական պահանջներին և աշխատաշուկային համապատասխան, որակի ներքին ապահովման համակարգի ներդրումը, ուսումնառության և դասավանդման բարելավման համար նպաստող պայմանների և խթանող մեխանիզմների ներդրումը, հարատև ուսուցման համակարգի զարգացումը և այլն: Ռազմավարական ծրագրի նպատակների իրագործման համար ՄՈՒՀ-ը մշակել է պլան-ժամանակացույց, որը, սակայն, ամբողջությամբ չի անդրադառնում ՌԾ բոլոր նպատակներին: Պլան-ժամանակացույցում սահմանված են հիմնականում վեց ուղղություններ:

Պլան-ժամանակացույցն իր մեջ ներառում է միջոցառումները, գործողությունները, ակնկալվող արդյունքները, իրականացման ժամկետները, ներդրումները ու ֆինանսական միջոցները և ռիսկերը: Ուշադրության է արժանի այն, որ գործողությունների իրականացման ժամկետները հիմնականում սահմանված են 2020-2024թթ., սակայն որոշ գործողությունների մասով սահմանված են նպատակների ձեռքբերման տարեկան ցուցանիշներ: Մասնավորապես, գրադարանային ֆոնդի հաշվառման և թարմացման բաժնում յուրաքանչյուր տարվա համար նախատեսված է 20%-ի ձեռքբերում: Պլան-ժամանակացույցում բացակայում են հստակ սահմանված ֆինանսական ներդրման սահմանաչափը, ինչպես նաև ներկայացված ակնկալվող արդյունքները հիմնականում հստակ և չափելի չեն:

Ըստ ինքնավերլուծության՝ Քոլեջի ներքին շահակիցներն են՝ ղեկավար կազմը/վարչատնտեսական կազմ/, դասախոսները, ուսանողները, ուսումնաօժանդակ կազմը, իսկ արտաքին շահակիցներն են՝ դիմորդները և նրանց ծնողները, գործատուները, համագործակցող կազմակերպությունները, պետական կառավարման մարմինները: Ինչ վերաբերում է ներքին և արտաքին շահակիցների ներգրավմանը ՌԾ մշակման աշխատանքներում, անհրաժեշտ է նշել, որ որպես այդպիսին ֆորմալ ձևաչափով կարիքների վերհանում տեղի չի ունեցել: ՌԾ-ն մշակելիս Տնօրենը հիմնվել է իր աշխատանքային բազմամյա փորձի վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի սահմանած հիմնական նպատակները:

ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագիրը մոտենում է իր ավարտին, ըստ Քոլեջի ղեկավար կազմի դիտարկման, այն մեծամասամբ իրականացել է, մասնավորապես շենքային պայմանների, ուսումնական և մասնագիտական միջավայրի ապահովման ուղղությամբ, սակայն առկա չեն հստակ վերլուծություններ, մշտադիտարկման արդյունքներ, որոնք կհիմնավորեն նշվածը: ՌԾ գնահատման համար որոշակիորեն հիմք են հանդիսանում տարեկան հաշվետվությունները, որոնք ներկայացվում են բոլոր ստորաբաժանումների և տնօրենի կողմից, սակայն վերջիններս նույնպես ամբողջապես կապակցված չեն ՌԾ նպատակներին և չեն ծառայում ՌԾ նպատակների ձեռքբերման գործիք:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԲԲՊՔ-ն իրականացնում է կրթական գործունեություն՝ ընդգրկելով 18 միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում, որոնք բխում են տարածաշրջանի կարիքներից: Հատկանշական է, որ ՄՈՒՀ-ի առաքելության հիմքում դրված է ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորումն ու հասարակական կյանքի ակտիվ մասնակցության խթանումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի առաքելության վերանայման անհրաժեշտությունը՝ այն ավելի ակնհայտորեն ուղղորդելով տեղական տնտեսության պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստմանը: Այս մոտեցումը հնարավորություն կընձեռի առավել լիարժեք արտացոլելու ներքին և արտաքին շահակիցների ակնկալիքները, ինչպես նաև ապահովելու, որ Քոլեջի գործունեությունն ամբողջությամբ համահունչ լինի իր առաքելության դրույթներին:

Ինչ վերաբերում է Ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցին, փորձագիտական խումբը նշում է, որ ՄՈՒՀ-ը կարիք ունի հստակեցնելու ակնկալվող արդյունքները՝ սահմանելով առավել կոնկրետ և չափելի քանակական ու որակական ցուցանիշներ: Միայն այս դեպքում հնարավոր կլինի գնահատել ՌԾ նպատակների իրականացումը: Անհրաժեշտ է հստակեցնել նաև ժամկետները՝ նրանց տրամադրվող ժամանակը դարձնելով առավել հստակ և իրատեսական: Ինչպես նաև, պլանային ֆինանսական ներդրումներն անհրաժեշտ է հաշվարկել՝ հասկանալու, թե որքանով է պլանավորումը իրական և արդյոք ՌԾ-ի իրականացման համար կան բավարար ֆինանսական միջոցներ:

Չնայած այն հանգամանքին, որ տնօրենի և ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները որոշակիորեն հնարավորություն են տալիս գնահատելու ռազմավարական ծրագրի իրականացումը, այնուամենայնիվ, ավելի նպատակային գնահատման իրականացման համար ՄՈՒՀ-ը կարող է հաշվետվությունների ներկայացման ձևաչափը համապատասխանեցնել ռազմավարական ծրագրի նպատակներին, ինչը կնպաստի ծրագրի

ավելի արդյունավետ գնահատմանը: Միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ը կարիք կունենա իրականացնելու ՌԾ մշտադիտարկում՝ ավելի համապարփակ կերպով գնահատելու ՌԾ-ընթացքը և արդյունքները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջն ունի առաքելություն, որը բխում է տարածաշրջանի կարիքներից և իրականացնում է ՈԱՇ-ին համապատասխան կրթական ծրագրեր, առկա է ռազմավարական ծրագիր և վերջինիս իրականացման պլան-ժամանակացույց, ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են ՌԾ իրականացման գործընթացում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման և Մանկավարժական խորհուրդների կողմից: Կառավարման խորհուրդը (ԿԽ) կոլեգիալ մարմին է, որը համակարգում է Քոլեջի գործունեությունը սահմանված կանոնակարգերին համապատասխան: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԿԽ-ն տեղեկացված է Քոլեջի գործունեության բոլոր ուղղություններից և ոչ միայն քննարկումների մակարդակով, այլև հնարավորինս աջակցում է ընթացիկ խնդիրների լուծման գործում, օրինակ, տարբեր միջոցառումների, մաստեր կլասների կազմակերպման, ուսանողներին գործնական միջավայրեր ապահովելու ուղղությամբ:

Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է կանոնակարգերով: Դասախոսական համակազմերը ընդգրկված են կառավարման, մանկավարժական խորհուրդներում, իսկ ուսանողները Ուսանողական և Կառավարման խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները, ըստ անհրաժեշտության նախաձեռնողականություն ցուցաբերում են կարիքների վերհանման համար, սակայն հարցերը հիմնականում լուծվում են ավելի ներքևի մակարդակում՝ մանկավարժական խորհուրդ, Ուսանողական խորհուրդ և այլն: ԿԽ-ում առավելապես քննարկվում են ֆինանսական, նոր հաստիքների ներդրման (օրինակ միկրոավտոբուսի համար վարորդի հաստիքի), գնումների պլանի փոփոխության վերաբերյալ հարցեր և այլն: Իսկ Մանկավարժական խորհրդում քննարկվում են առարկայական մոդուլային պլանները, ծրագրերը, դասալսումների ժամանակացույցները, պետական որակավորման քննությունների արդյունքները և այլն:

2019թ.-ի միավորման արդյունքում քոլեջն իր գործունեությունը ծավալում է երեք առանձին շենքերում, որոնք միմյանցից գտնվում են որոշակի հեռավորության վրա: Կրթական ծրագրերը կառավարվում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, ամբիոնի վարիչի և ցիկլի պատասխանատուների կողմից: Ուսումնական հաստատության դասախոսների և ուսանողների միջև արդյունավետ համագործակցությունն ու հաղորդակցությունը խթանելու նպատակով տնօրենի և նրա տեղակալների կողմից ապահովվում է շաբաթական այց բոլոր մասնաշենքեր: Դասացուցակը կազմվում է այնպես, որ ուսանողների և դասախոսների գործունեությունը ներառի բոլոր մասնաշենքերը: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր ստորաբաժանումները՝ անկախ իրենց շենքային դիրքավորումից աշխատում են նույն ձևաչափով: Աշխատակիցների միջև հաղորդակցությունն ապահովվում է նաև մեթոդական մասնախմբերի նիստերի միջոցով, որոնք հնարավորություն են տալիս կիսվելու իրենց փորձով, դասալսումների արդյուքներով և այլն:

Միևնույն ժամանակ, վարչական աշխատակիցները, օրինակ՝ Կարիերայի պատասխանատուն, որակի հանձնախմբերի պատասխանատուները, սպասարկում են բոլոր մասնաշենքերը՝ ապահովելով հաստատության միասնական աշխատանքը: Թե՛ վարչական աշխատակիցների, թե՛ դասախոների, և թե՛ ուսանողների տեղափոխությունը տարբեր մասնաշենքերով ապահովում է քոլեջը՝ իր միկրոավտոբուսի միջոցով:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր աշխատակիցների աշխատանքը կանոնակարգված է, հստակ տարանջատված է բոլորի գործառութային շրջանակը: Առկա են պաշտոնի անձնագրեր, որոնցում նկարագրված է յուրաքանչյուր աշխատակցին ներկայացվող գիտելիքները, կարողությունները, գործառույթները, պատասխանատվության շրջանակը:

ՄՈՒՀ-ի կառավարման կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա (հորիզոնական և ուղղահայաց) կապերը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ երբեմն նկատելի են դեպքեր, երբ հաստիքների փաստացի անվանումների և Քոլեջի կառուցվածքի միջև կան անհամապատասխանություններ: Կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ առկա է կրթության տեղեկատվավերլուծական բաժին, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականում նման բաժին, որն իրականացնում է վերլուծություններ, առկա չէ: Բաժնի կազմում ընդգրկված է միայն մեկ աշխատակից, ով ապահովում է մալբերի համակարգով արտաքին հաղորդակցությունը: Բացի այդ, կառուցվածքում առանձնացված է նաև ուսումնական մաս, որին ենթակա է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնական մաս որպես առանձին ստորաբաժանում գործնականում գոյություն չունի: Ուսումնական աշխատանքները կառավարվում են բացառապես ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից: Նշենք նաև, որ կառուցվածքում ցիկլային հանձնաժողովները արտահայտված չեն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի «Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը, որում սահմանված է ֆինանսների տնօրինման նպատակն ու խնդիրները, քաղաքականությունն ու սկզբունքները, ֆինանսների ռեսուրսների բաշխման ուղղությունները (աշխատավարձ, նյութատեխնիկական բազայի համալրում և այլն): Անհրաժեշտ է նշել, որ քաղաքականությունը լիարժեք չի ապահովում Ռազմավարական նպատակներ և ֆինանսավորում կապը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Քոլեջի ֆինանսական բաշխումը

կատարվում է տարեկան պլանավորմամբ՝ հիմնված ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի վրա։ Ըստ վերոնշյալ փաստաթղթի, ծախսերի հիմնական ուղղությունները հետևյալն են՝ աշխատավարձ (84%), ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերում (0.35%), իսկ մնացած միջոցները նախատեսվում են շենքի պահպանման, կոմունալ վճարումների և այլ կարիքների համար։ Անհրաժեշտ է նաև նշել, որ Քոլեջի ղեկավար անձնակազմը ակտիվություն է դրսևորում տարբեր ներդրողներ և դրամաշնորհներ գտնելու ուղղությամբ։ Օրինակ, նվիրատվության արդյունքում ձեռք է բերվել տրանսպորտային միջոց, իսկ դրամաշնորհային ծրագրերի շրջանակում ստեղծվել է «Վերականգնվող էներգիայի աղբյուրների և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների» կենտրոն-լաբորատորիա, ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա, «Դեղագործություն» ՄԿԾ-ի համար լաբորատոր նյութեր, սարքավորումներ, ինչպես նաև տարբեր գործիքներ և սարքավորումներ կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար և այլն։

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով։ Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ։ Պլաններում ներառված գործողություններն ըստ էության կրկնվում են նախորդ տարիների պլանավորման համեմատ և լիովին համահունչ չեն Ռազմավարական ծրագրի նպատակներին։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն իրականացնում է նաև որոշ գործընթացներ՝ կարճաժամկետ դասընթացների իրականացում, դրամաշնորհային ծրագրերին դիմում և այլն, որոնք պլաններում արտահայտված չեն։ Պլաններին համապատասխան բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հաշվետվություններ։ Հաշվետվությունները ներկայացվում են տարբեր ձևաչափերով։ Որոշ հաշվետվություններ ունեն վերլուծական մաս, օրինակ՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենների հաշվետվությունները, որոնցում վեր են հանված առկա խնդիրները։ Որոշ ստորաբաժանումների հաշվետվություններն էլ առավել նկարագրողական են։

Իսկ ինչ վերաբերում է Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը հաշվի է առնում որոշ գործոններ։ Օրինակ արտաքին գործոններից է Բերդ համայնքում համապատասխան մասնագետներ գտնելու դժվարությունը։ Այդ պատճառով մարդկային ռեսուրսի զարգացման նպատակով ՄՈՒՀ-ը նախաձեռնել է տարբեր ակումբների բացումը, օրինակ՝ «Սկսնակ մանկավարժների», «Առաջավոր փորձի դաշտ»։ Վերջիններիս միջոցով մենթորները նպաստում են կադրերի մասնագիտական աճին և զարգացմանը։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, թե՛ ներքին, և՛ թե արտաքին գործոնները հաշվի են առնվում հիմնվելով ղեկավար անձնակազմի կառավարչական փորձառության, տարբեր շահակիցների հետ հաղորդակցության հիման վրա։ Տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգային մեխանիզմները ՄՈՒՀ-ում դեռևս ներդրման փուլում են՝ որակի ապահովման համակարգի ներդրմանը զուգընթաց։

Ինչ վերաբերում է ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ որոշ գործընթացներում ՄՈՒՀ-ը մեկ շրջափուլ անցել է, օրինակ՝ մասնաշենքերի վերանորոգման, մենթորական ծրագրի ներդրման, իսկ որոշները՝ դեռևս ՊԻԳԲ շրջափուլի իրականացման փուլում են, օրինակ՝ դուալ կրթության ներդրումը։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ երբեմն տեսանելի է, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի մշակել և ներդրել համապատասխան գործիքակազմ և

մեխանիզմներ արդյունավետությունը գնահատելու համար, օրինակ դուալ կրթության ներդրման արդյունավետությունը գնահատելու համար։

Քոլեջում շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության հավաքագրման հիմնական մեխանիզմներից են Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքները, Կարիերայի կենտրոնի կողմից հավաքագրվող շրջանավարտների հետագծի վերաբերյալ տվյալները։ Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվել են նաև հարցումներ գործատուների շրջանում, որի նպատակն է եղել գնահատելու շրջանավարտների մասնագիտական պատրաստվածությունը։ Շնորհված որակավորումների որակի վերաբերյալ տվյալները ՄՈՒՀ-ը չի հրապարակում, վերջինս պայմանավորված է նաև նրանով, որ Քոլեջի կայքէջը նոր է գործարկվել։ Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ որոշակիորեն լուսաբանվում են միայն քոլեջի առօրյա գործընթացները։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ղեկավարությունը վերամիավորումից հետո իրականացրել է նշանակալի աշխատանքներ՝ կառավարման միասնական համակարգ ձևավորելու ուղղությամբ, ինչը նպաստել է հաստատության կառավարման գործընթացների համակարգվածության բարձրացմանը, ստորաբաժանումների միջև համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաև հաստատության աշխատակիցների և ուսանողների միջև արդյունավետ հաղորդակցման և համագործակցության զարգացմանը։ Փորձագիտական խումբը գնահատում է նաև այն հանգամանքը, որ Քոլեջը որդեգրել է քաղաքականություն. անկախ շենքերի հեռավորությունից պայմաններ ստեղծել, որպեսզի թե՛ վարչական, թե՛ դասախոսական, թե՛ ուսանողական անձնակազմերը հնարավորություն ունենան գտնվել բոլոր մասնաշենքերում և ակտիվորեն մասնակցել ներքին որոշումների կայացման գործընթացին։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են Քոլեջի կառավարման տարբեր գործընթացներում, ինչն ապահովում է որոշումների կայացման միասնականությունը։ Միաժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին շահակիցների ներգրավվածությունը անհրաժեշտ է առավել ակտիվացնել մասնավորապես ՄԿԾ-ների իրականացման գործընթացում, որը կնպաստի ուսանողների պրակտիկ հմտությունների բարելավմանը, ինչպես նաև տարածաշրջանի զարգացմանը։

Ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքին, ապա փորձագիտական խումբը գտնում է, որ այն հստակեցնելու և այն ՄՈՒՀ-ում իրականացվող աշխատանքին լիարժեք համապատասխանեցնելու անհրաժեշտություն կա, ինչը կնպաստի պատասխանատվությունների հստակ բաշխմանը և կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը։

Դրական է, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջը մշակել է ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն։ Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական պլանավորումը անհրաժեշտ է համապատասխանեցնել ռազմավարական ծրագրի նպատակներին, ինչը կնպաստի հաստատության ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանը և նախադրյալներ կստեղծի հաստատության համահավասար և կայուն երկարաժամկետ զարգացման համար։ Միաժամանակ, փորձագիտական խմբի համար գովելի է քոլեջի ակտիվ նախաձեռնողականությունը այլընտրանքային ռեսուրսների ներգրավման ուղղությամբ, որը էական նշանակություն ունի

ռազմավարական նպատակների իրագործման և հաստատության շարունակական զարգացման ապահովման գործընթացում։

Դրական է, որ Քոլեջն իրականացնում է պլանավորման գործընթացներ տարբեր մակարդակներում (երկարաժամկետ և ընթացիկ), ինչը նախադրյալ է ստեղծում կառավարման համակարգվածության և հաստատության գործունեության կազմակերպվածության համար։ Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը շեշտադրում է ընթացիկ պլանավորումների համահունչության անհրաժեշտությունը ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի նպատակներին, ինչը թույլ կտա ապահովել երկարաժամկետ ծրագրի ամբողջական և արդյունավետ իրականացումը։

Դրական է, որ ԲԲՊՔ-ն փորձում է որոշ ներքին և արտաքին ազդակների վրա գնահատել հաստատության վրա ազդող գործոնները, սակայն խումբը ընդգծում է համապարփակ և մանրակրկիտ ուսումնասիրությունների անհրաժեշտությունը։ Միևնույն ժամանակ, որակի ներքին ապահովման համակարգի կայացումը, ինչպես նաև վերլուծական գործիքակազմերի և մեխանիզմների մշակումն ու արդյունավետ կիրառումը կարևոր նշանակություն ունեն։ Դրանք հնարավորություն կընձեռեն բացահայտելու հաստատության գործունեության տարբեր ուղղություններով առկա խնդիրները և հիմք կստեղծեն տվյալահենք և հիմնավոր կառավարման համար։ Վերոնշյալը հատկապես էական է ՄՈՒՀ-ում դուալ կրթության ներդրման արդյունավետության գնահատման տեսանկյունից։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ֆեյսբուքյան էջի միջոցով ապահովում է մի շարք գործընթացների վերաբերյալ իրազեկվածություն։ Միևնույն ժամանակ, խումբը կարևորում է Քոլեջի կողմից արդեն իսկ ձեռնարկված քայլերը՝ կայքի ստեղծման և դրա տեղեկատվական բովանդակության համալրման ուղղությամբ, ինչը կարող է էական դեր ունենալ տեղեկատվության արդյունավետ փոխանցման գործում։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջը միավորումից հետո ներդրել է համընդհանուր գործուն, արդյունավետ և կանոնակարգված կառավարման համակարգ, ապահովված է համապատասխան մարդկային ռեսուրսներով, որոնք նպաստում են մասնաշենքերի համաչափ զարգացմանը, առկա են նյութական և ֆինանսական ռեսուրսների ներգրավման որոշակի այլընտրանքային մեխանիզմներ, ՄՈՒՀ-ում ձևավորված են որոշումների կայացման կանոնակարգված գործընթացներ, Քոլեջը որոշակիորեն ներդրել է կառավարման ՊԻԳԲ շրջափուլը, ինչպես նաև առկա են շնորհվող որակավորումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 2-ի պահանջներին։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Բերդի բազմագործառութային պետական քոլեջն ունի 11 միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցում իրականացնելու լիցենզիա, որոնցից այս պահին իրականացվում են 7-ը՝ «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն», «Անասնաբուժություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Դեղագործություն», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտություններով: Բացի միջին մասնագիտական կրթական ծրագրերից, Քոլեջն իրականացնում է նաև նախնական (արհեստագործական) կրթություն: 7 լիցենզավորված ծրագրերից գործող են 6-ը՝ «Խոհարարական գործ», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ավտոէլեկտրիկ)», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ավտոնորոգող)», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Համակարգիչների շահագործում», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»: Քոլեջը կազմակերպում է նաև հեռակա ուսուցում՝ «Մենեջմենթ», «Նախադպրոցական կրթություն» և «Դեղագործություն» կրթական ծրագրերով:

2023-2024 ուստարում MAVETA («Հայաստանում գյուղատնտեսական ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում») ծրագրի շրջանակներում Քոլեջում ներդրվել է դուալ կրթության համակարգը «Անասնաբուժություն» մասնագիտությամբ: 2024-2025 ուստարում ՄՈՒՀ-ում նույն մոդելով մեկնարկել է նաև «Գյուղատնտեսության մեքենայացում» կրթական ծրագիրը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր մասնագիտությունների ներդրման համար հիմք են հանդիսանում գործատուների, համայնքների ղեկավարների հետ հանդիպումները և քննարկումները, Միասնական սոցիալական ծառայության տրամադրած տվյալները թափուր աշխատատեղերի վերաբերյալ: Անհրաժեշտ է նշել, որ շուկայի կարիքների վերհանումը իրականցվում է բանավոր քննարկումների մակարդակում: Իսկ վերոգրյալ հանդիպումները հստակ պլանավորված և պարբերական չեն, տեղի են ունենում ըստ իրավիճակի:

ՄՈՒՀ-ը սերտ համագործակցում է նաև տարածաշրջանի գործատուների հետ և հաճախ մասնագետների թողարկման առաջարկը ստանում է անմիջապես նրանցից: Օրինակ՝ «Տավուշ տեքստիլ» ընկերության առաջարկով ՄՈՒՀ-ը ներդրել է «Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտությունը փականագործ-էլեկտրիկ որակավորմամբ: 2024թ. նոյեմբեր ամսվա դրությամբ ՄՈՒՀ-ում կրթություն է ստանում 317 ուսանող:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՊԿՉ-ները հիմնականում ներդրվում են առանց բովանդակային մեծ փոփոխությունների: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի մասնագետների դիտարկմամբ «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության (էլեկտրիկ՝ ավտոմեքենաների դիագնոստիկա որակավորմամբ) ՄԿԾ-ի հատուկ մասնագիտական մոդուլների քանակը, տևողությունը և բովանդակությունը բավարար չեն մասնագետ պատրաստելու համար: ՊԿՉ-ի վերանայման մասով ՄՈՒՀ-ն

առաջարկ է ներկայացրել ՄԿՈՒԶԱԿ, սակայն ինքնուրույն այդ ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլների վերանայում կամ համալրում չի նախաձեռնել և իրականացրել:

Բոլոր ՄԿԾ-ներում հիմնական փոփոխությունները վերաբերում են միայն տեսական և գործնական ժամերի վերաբաշխմանը: Բացի հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են պահուստային և ընտրովի ժամեր, որոնք բաշխվում են արդեն առկա մոդուլների միջև և ուղղվում գործնական ժամերին: Բովանդակային փոփոխությունները վերաբերում են հիմնականում «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ին, որում պահուստային և ընտրովի ժամերը տրամադրվել են «Հոգեբանություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Մշակութաբանություն», «Բարոյագիտություն», «Օտար լեզու» առարկաներին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ընտրովի առարկաների մեծ մասի ընտրությունը բանավոր քննարկումների արդյունք է և չունի փաստաթղթային արձանագրում, որտեղից երևան ընտրության հիմնավորումները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ միայն օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունն է, որը նշվում գործատուների շրջանում իրականացված հետազոտության մեջ, որն կատարվել է Կարիրայի կենտրոնի կողմից: Ինչ վերաբերում է դասավանդմանը և գնահատմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դասալսումներից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսները հիմնականում հանձնարարում են ինքնուրույն աշխատանքներ, որոշ մասնագիտությունների դեպքում դրանք միտված են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացմանը: Օրինակ՝ «Դեղագործություն» մասնագիտության ուսանողները ուսումնառության ընթացքում գրում են ռեֆերատներ, անհատական աշխատանքներ դեղաբույսերի մասին, իսկ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողները կատարում են հետազոտական առաջադրանքներ՝ ուսումնասիրելով Բերդ համայնքի տեսարժան վայրերը և մշակելով էքսկուրսիաների նոր ուղիներ զբոսաշրջիկների համար, նկարահանում հոլովակներ: Նրանք ուսումնասիրում են տարածաշրջանին բնորոշ փորձառնական (արտադրության գործընթացում զբոսաշրջիկի ակտիվ ներգրավմամբ) զբոսաշրջության հնարավոր ձևերը: Զբոսաշրջային փաթեթների մշակման առաջադրանքները ներառում են երթուղիների պլանավորում, հյուրանոցների և տրանսպորտի գնային քաղաքականությունների ուսումնասիրություն և այլն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ հետազոտական, ստեղծագործական բնույթի առաջադրանքները ոչ բոլոր ՄԿԾ-ներում են շեշտադրված:

«Ֆինանսներ», «Մենեջմենթ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ուսանողները ուսումնասիրում են ինչպես ընդհանուր անգլերեն, այնպես էլ մասնագիտական անգլերեն, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ, ըստ ՄԿԾ-ների, առկա չեն հատուկ ուսումնական նյութեր կամ ձեռնարկներ, որոնք նպաստում են մասնագիտական բառապաշարի զարգացմանը: «Խոհարարական գործ» կրթական ծրագրում բացակայում է կիսամյակների ընթացքում բաղադրատոմսերի հստակ պլանավորումը, իսկ առաջադրանքներում երբեմն բացակայում է պարզից բարդ հաջորդականությունը: Բաղադրատոմսերը հիմնականում ուսանողներին թելադրվում են: Ընթացիկ գնահատման համար հստակ չափորոշիչներ չեն կիրառվում, և գնահատումն իրականացվում է դասավանդողի փորձառության հիման վրա: Ծրագրում բացակայում են մասնագիտական գրականություն և տեղեկատվական աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են մասնագետների պատրաստման համար:

Ուսումնական պլաններում ներառված են երկու տեսակի պրակտիկաներ՝ ուսումնական և արտադրական: Ուսանողները իրենց արտադրական և ուսումնական պրակտիկաների արդյունքներն էլ ներկայացնում են մեկ միասնական պրակտիկայի օրագրով: Օրագրում չի տարանջատվում պրակտիկաների տարբերությունը, և դրանց համար նախատեսված է մեկ ընդհանուր ծրագիր /թեմատիկ պլան/: Օրագրում առանձնացված չէ հատված ուսանողի գնահատման համար: Այն արձանագրվում է առանձին տեղեկագրով 10-միավորային համակարգով: Պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված չեն:
«Դեղագործություն» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ուսումնաարտադրական պրակտիկաները բաշխվում են 3-րդից 6-րդ կիսամյակների միջև և անցկացվում են յուրաքանչյուր կիսամյակի ավարտին: Վերջինիս տևողությունը տարբեր ծրագրերում տարբեր է, քոլեջը այսպիսի բաշխմամբ փորձում է ապահովել բոլոր կիսամյակներում ուսանողի գործնական միջավայրում լինելու խնդիրը: Պրակտիկաների ժամերը հիմնականում հատկացվում են առանցքային, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական առարկաներին/մոդուլներին՝ ըստ հնարավորության, ապահովելով տվյալ մոդուլի ավարտից հետո ուսանողի գործնական միջավայրում լինելը:

Դուալ կրթության իրականացման համար առկա են ուսումնական պլանը, դուալ ուսուցման օրագիրը, առաջադրանքների թերթիկները ըստ մոդուլների, գնահատման թերթիկը, որը ներառում է գնահատման սանդղակ և դասավանդողի մեկնաբանության դաշտ: Դուալ կրթության օրագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն ներառելու է գործնական ուսուցման գնահատում ըստ ուսումնառության արդյունքների, կատարված աշխատանքների տվյալներ, լեզվի իմացություն, փափուկ հմտությունների գնահատում: Օրագրերի արդյունավետությունը դեռևս գնահատել հնարավոր չէ, քանի որ գործնական աշխատանք ուսանողները սկսելու են իրականացնել 2024-2025 ուստարվանից:

ՄՈՒՀ-ը մշակել է «Ուսանողների գիտելիքի ստուգման, գնահատման, բողոքարկման կանոնակարգ», որով մոդուլները գնահատվում են «անցել է» կամ «չի անցել» սկզբունքով, բացի այդ առկա է 10-միավորային գնահատման սանդղակ: Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր: Նման մոտեցումը ընդունված է բոլոր մասնագիտություններում: Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որը կարող է լինել հարց ու պատասխանի, գործնական առաջադրանքի ձևով: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասավանդողները ուղղորդվում են ՄԿԾ-ով սահմանված գնահատման ձևերով և վերոգրյալ կանոնակարգում սահմանված գնահատման սանդղակով:

ՄՈՒՀ-ը ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ չի սահմանել: «Ուսանողների գիտելիքի ստուգման, գնահատման, բողոքարկման կանոնակարգ»-ը սահմանում է ուսանողների իրավունքները գնահատականի բողոքարկման մասով: Սակայն փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:
Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, որոնց քննական տոմսերը ներառում են տեսական գիտելիքը ստուգող 2 հարց և մեկ գործնական կամ հետազոտական առաջադրանք: Օրինակ **«Զբոսաշրջություն»** մասնագիտության պետական ամփոփիչ քննության շրջանակում ուսանողները, բացի տեսական հարցերից մշակում են երթուղի, **«Խոհարարական գործ»** ՄԿԾ-ի քննությանը տեսական հարցերին կից նախատեսված է

գործնական առաջադրանք՝ ուտեստի պատրաստում, իսկ **«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»** մասնագիտության պետական քննության գործնական բաղադրիչը ներառում է մազերի հարդարման առաջադրանք։ Գործնական առաջադրանքների գնահատման համար հստակ սահմանված չափանիշներ առկա չեն առկա։ Սակայն մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ գնահատման գործընթացում դասախոսական կազմն առաջնորդվում է որոշ առանցքային չափանիշներով, ինչպիսիք են, օրինակ, **«Խոհարարական գործ»** ՄԿԾ-ում՝ հիգիենայի և անվտանգության պահպանման, ուտեստի պատրաստման տեխնիկայի և ձևավորման որակի գնահատումը։ Անհրաժեշտ է նշել, որ այդ չափանիշները ոչ մի փաստաթղթում ամրագրված չեն։

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն։ Իսկ ինչ վերաբերում է ՄԿԾ-ների մշտադիտարկմանը և վերանայմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ նման քաղաքականություն ՄՈՒՀ-ում ներդրված չէ, թեև ՄՈՒՀ-ի 2020-2024 ռազմավարական ծրագրի ուղղություններից է ՄԿԾ-ների կառուցվածքային և բովանդակային վերափոխումը, ինչպես նաև առկա է 2020թ. հաստատված «Առարկաների/մոդուլների/ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման կանոնակարգ»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տեղի են ունենում քննարկումներ ուսումնամեթոդական խմբերի նիստերում։ 2024թ. ՄՈՒՀ-ը գրավոր առաջարկ է ուղղել ՄԿՈՒԶԱԿ վերանայելու «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության (որակավորումը՝ էլեկտրիկ՝ ավտոմեքենաների ծրագրային արատորոշման և սպասարկման) ծրագիրը։ Սակայն պետք է նշել, որ ՄԿԾ-ների որակական/բովանդակային փոփոխություններ, որոնք բխեն մշտադիտարկման արդյունքներից, անցկացվող հարցումներից, առկա չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է ԲԲՊՔ-ի դերակատարությունը տարածաշրջանի զարգացման և մասնագետներով ապահովելու գործում։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում որոշ կրթական ծրագրերի բովանդակային լրացումների իրականացումը, մասնավորապես՝ հատուկ մասնագիտական մոդուլների ներդրումը։ Խումբը կարևորում է, որ Քոլեջը այս մոտեցումը տարածի նաև մյուս ՄԿԾ-ների վրա՝ ապահովելով ծրագրերի արդիականացում և համապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին։ Միևնույն ժամանակ, խումբը շեշտում է, որ ՄԿԾ-ների բարելավման գործընթացը պետք է հիմնվի աշխատաշուկայի խորքային վերլուծությունների և դրանց արդյունքների փաստաթղթային ամրագրումների վրա։ Այս մոտեցումը կապահովի ծրագրերի արդյունավետ տեղայնացումը և բարելավումների համակարգված իրականացումը։ Նման գործընթացի արդյունավետ կառավարման համար կարևոր է դրա կանոնակարգումը։ Հստակ սահմանված կանոնակարգը, գործողությունների պլանը, սպասվելիք արդյունքները, պատասխանատուները և ժամանակացույցը կնպաստեն ծրագրերի շարունակական և կայուն զարգացմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում դուալ կրթության համակարգի ներդրման փորձը, որն էականորեն նպաստում է ուսանողների մասնագիտական հմտությունների ձևավորմանը գործնական միջավայրում՝ խրախուսելով գործատուների հետ սերտ համագործակցությունը։ Նման դրական մոտեցումը նպատակահարմար է տարածել նաև այլ մասնագիտությունների, մասնավորապես՝ «Խոհարարական գործ» ՄԿԾ-ի վրա։ Այս ՄԿԾ-ի հետ կապված փորձագիտական խումբը նաև գտնում է, որ անհրաժեշտ է մշակելու

կիսամյակային բաղադրատոմսերի պլան՝ ապահովելով առաջադրանքների պարզից բարդ հաջորդականությունը, ներդնելու գնահատման հստակ չափորոշիչներ, և ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութերը կազմել մասնագիտական հավաստի աղբյուրների հիման վրա՝ երաշխավորելով ՄԿԾ-ով սահմանված վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերումը։ Դրական է, որ ՄՈՒՀ-ը կարևորում է մասնագիտական օտար լեզվի դասավանդումը, ինչը միտված է մասնագիտական կարողությունների զարգացմանը, սակայն փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում օտար լեզվի ձեռնարկների առկայությունը ըստ մասնագիտությունների՝ մասնագիտական օտար լեզվի դասավանդումը թիրախային դարձնելու համար։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ունեցած փորձառությունը ուսանողների մոտ հետազոտական, վերլուծական և ստեղծագործական հմտություններ զարգացնելուն ուղղված առաջադրանքների տրամադրումը։ Միաժամանակ կարևոր է նմանատիպ առաջադրանքների ներառումը բոլոր ՄԿԾ-ներում՝ ապահովելով ուսանողների կարողությունների զարգացման միասնական մոտեցում։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի այն մոտեցումը, որ պրակտիկաները նախատեսված են բոլոր կիսամյակներում, ինչը ուսանողներին հնարավորություն է տալիս շարունակաբար լինել գործնական միջավայրում։ Միևնույն ժամանակ կարևոր է մասնագիտական այցերի, ուսումնական և արտադրական պրակտիկաների հստակ տարանջատումը՝ դրանց համար գնահատման չափանիշների մշակմամբ, ինչը կապահովի ուսանողների ձեռք բերած կարողությունների համապատասխանության թափանցիկ գնահատումը։

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄԿԾ-ների բենչմարքինգի մեխանիզմների ներդրումը հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին համեմատել իր կրթական ծրագրերը այլ ուսումնական հաստատությունների լավագույն փորձի հետ և բացահայտել նորարարական մոտեցումներ։ Նման գործընթացը կնպաստի կրթական ծրագրերի բովանդակային արդիականացմանը, գնահատման չափորոշիչների հստակեցմանը, ինչպես նաև ապագային միտված հմտությունների ձևավորման և նոր մոդուլների արդյունավետ ներդրմանը՝ ապահովելով ՄԿԾ-ների առավել մրցակցային լինելուն։ Նման միջոցառումները կխթանեն նաև ուսումնական հաստատությունների միջև համագործակցությունը և փորձի փոխանակումը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ում ներդրվող մասնագիտությունների ընտրությունը հիմնված է տարածաշրջանում այդ ոլորտներում մասնագետների պահանջարկի վրա, ինչպես նաև հաշվի առնելով դուալ կրթության մոդելի փորձարկումը երկու մասնագիտությամբ, ՄԿԾ-ների բարելավման առանձին փորձերը, ուսանողներին տրամադրվող առաջադրանքները ուղղված մասնագետի պատրաստմանը և պրակտիկաների բաշխման միջոցով գործնական միջավայրին մշտապես առնչվելու հնարավորությունը, կարելի է եզրակացնել, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին։

Եզրակացություն: Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին փորձագիտական խումբը գնահատում է **բավարար**։

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Դիմորդների հավաքագրման նպատակով ՄՈՒՀ-ն իրականացնում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, որոնց շրջանակներում կազմակերպվում են այցելություններ քաղաքի և հարակից գյուղերի դպրոցներ, բաց դռների օրեր, որոնց ընթացքում դիմորդներին ընձեռվում է հնարավորություն ծանոթանալու քոլեջի ուսումնական պայմաններին, առկա կրթական ծրագրերին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և մասնագիտական զարգացման հնարավորություններին: Դիմորդների ներգրավման գործընթացին մասնակցում են դասախոսները, Ուսանողական խորհրդի անդամները, ինչպես նաև Կարիերայի կենտրոնի պատասխանատուն:

ԲԲՊՔ-ում որոշ մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ: ՄՈՒՀ-ի ղեկավարությունը այս պարբերականությունը պայմանավորում է տարածաշրջանի շուկայի փոքր ծավալով և համապատասխան մասնագետների պահանջարկով: Սակայն հարկ է նշել, որ այս մոտեցումը հիմնավորված չէ հատուկ աշխատաշուկայի ուսումնասիրությամբ կամ հստակ վիճակագրական տվյալներով: Օրինակ, ելնելով շուկայի պահանջարկից, այս տարի «Շուկայաբանություն» մասնագիտության ընդունելություն չի իրականացվել: Այս եղանակով ՄՈՒՀ-ը փորձում է ապահովել շրջանավարտի զբաղվածությունը Բերդում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին նկատվում է ուսանողների թվի դինամիկ աճ: 2021-2022թթ. ուսանողների քանակը կազմել է 238, 2023-2024՝ 324 ուսանող, իսկ 2024-25թթ. առաջին կիսամյակին՝ 317: Ուսանողների քանակի աճ նկատելի է հատկապես «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» և «Համակարգիչների շահագործում» մասնագիտությունների ուղղությամբ:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողների հեռացումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ 2021-2022 ուստարում քոլեջից հեռացվել է 17 ուսանող, 2022-2023 ուստարում՝ 14 ուսանող, իսկ 2023-2024-ին՝ 8 ուսանող: Ուսումնասիրությունները փաստում են, որ ուսանողների արտահոսքի հիմնական պատճառ են տղաների բանակ զորակոչվելը, կրթությունը այլ հաստատությունում շարունակելը, բնակավայրի փոփոխությունը, ուսման վարձը չվճարելը և ուսումը չշարունակելը: Քոլեջում ուսանողների կրթական կարիքները բացահայտվում են կուրսղեկների, Որակի ապահովման կենտրոնի, կարիերայի ուղղորդման կենտրոնի, ՈՒԽ-ի միջոցով: Ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում հարցումների իրականացումը, ՈՒԽ-ի հետ քննարկումները, «Բողոքների և առաջարկությունների» արկղիկը, կուրսղեկի ժամի շրջանակներում կազմակերպվող քննարկումները, կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից կազմակերպված սեմինարները, կլոր-սեղան քննարկումները, ոչ ֆորմալ հանդիպումները: Այս մեխանիզմների միջոցով վեր են հանվել կարիքներ կապված դասապրոցեսի բարելավման վերաբերյալ, ինչպես նաև լսարանային պայմանների և քոլեջի հարակից շրջաններից եկող ուսանողների տրանսպորտի հարցը:

ՄՈՒՀ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության հիմնական մարմինը Ուսանողական խորհուրդն է, որն իր գործունեությունն իրականացնում է խորհուրդի հաստատված կանոնադրության համաձայն: ՈՒԽ անդամները ընտրվում են ժողովների

ընթացքում, և անդամ դառնալու համար սահմանված պայմաններից են ուսանողի բարձր առաջադիմությունը և կազմակերպչական կարողությունները: ՈւԽ աշխատանքները կազմակերպվում են տարեկան պլանավորմամբ, որտեղ նշվում են նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները և պատասխանատուները: ՈւԽ-ն իր նիստերի ընթացքում քննարկում և պլանավորում է առաջին կուրսեցիների համար տեղեկատվական հանդիպումներ, տարբեր թեմաներով միջոցառումներ, ինչպիսիք են «Գիտելիքը ուժ է», «Անկախության տոն» և «Պարույր Սևակ 100» և այլն: ՈւԽ-ի միջնորդությամբ և տնօրինության հետ քննարկումների արդյունքում ՄՈՒՀ-ն ապահովում է շրջակա գյուղերից եկող ուսանողների տեղափոխումը Քոլեջ քաղաքից (մինչև քաղաք ուսանողները հասնում են առանձին տրանսպորտով): Անհրաժեշտ է նաև նշել, որ ուսանողները դիմում են ՈւԽ-ին ոչ միայն ուսման հետ կապված հարցերով, այլև ուսանող-ուսանող կամ ուսանող-դասախոս միջանձնային խնդիրներով:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին տրամադրվող խորհրդատվական պարապմունքներին, ապա անհրաժեշտ է նշել, որ խորհրդատվությունները կազմակերպում են դասախոսները և վարպետները քննություններին նախորդող ժամանակահատվածում հստակ ժամանակացույցով: Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ընթացքում ուսանողներին տրամադրվում են պատասխաններ նրանց հուզող հարցերի վերաբերյալ, որոնք օգնում են յուրացնելու դասավանդվող առարկայի դժվար հասկանալի թեմաները, բարեհաջող հանձնելու ստուգարքները և քննությունները:

Ուսանողների և շրջանավարտների կարիերայի զարգացմանը նպաստելու նպատակով Քոլեջում գործում է Կարիերայի ստորաբաժանումը: Կարիերայի պատասխանատուն կազմակերպում է պարապմունքներ, որոնք ուղղված են ինքնակենսագրականների կազմմանը, գործատուին ներկայանալու հմտությունների զարգացմանը: Կարիերայի կենտրոնը նաև ուղղորդում է ուսանողներին մասնակցելու տարբեր սեմինարների և երիտասարդական ֆորումների, ինչպիսիք են՝ «Նախագծերի ճկուն կառավարում» թեմայով երկօրյա գործնական դասընթացը, «Երիտասարդական ոլորտի զարգացումը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական մարտահրավերների համատեքստում» թեմայով ֆորումը և այլն: Բացի այդ, Քոլեջի Ուսանողական խորհուրդը և Կարիերայի կենտրոնը մասնակցել են «Վիններթ Բերդի» կողմից կազմակերպված բնապահպանական գաղափար դրամաշնորհին՝ արժանանալով հաղթանակի և ստանալով 300,000 դրամ: Արդյունքում, այդ գումարը օգտագործվել է երկրորդ մասնաշենքի տարածքի բարեկարգմանը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Կարիերայի պատասխանատուն շրջանավարտներին պարբերաբար տրամադրում է տեղեկատվություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները: Շրջանավարտների հետագծի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս հետևյալ միտումները. **2021-2022** ուստարում 70 շրջանավարտներից 15%-ը շարունակել է ուսումը բուհերում համապատասխան մասնագիտությամբ, 35%-ն աշխատում է, որից միայն 21%-ն իր մասնագիտությամբ, 31%-ը զորակոչվել են բանակ և 17%-ը գործազուրկ է: **2022-2023** ուստարում 72 շրջանավարտներից 22%-ը շարունակել է ուսումը բուհերում համապատասխան մասնագիտությամբ, 37%-ն աշխատել է, որից միայն 23%-ն իր մասնագիտությամբ, 26%-ը

զորակոչվել են բանակ և 13%-ը գործազուրկ է: **2023-2024** ուսումնական տարում 101 շրջանավարտներից 29%-ը շարունակել է ուսումը բուհերում համապատասխան մասնագիտությամբ, 33%-ը զբաղված է եղել աշխատանքով, որից միայն 16%-ն իր մասնագիտությամբ, 22%-ը զորակոչվել է բանակ և 16%-ը գործազուրկ է: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Զբոսաշրջություն» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» ՄԿԾ-ները: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը չի հստակեցրել այն ոլորտները, որտեղ աշխատելը կդիտարկվի մասնագիտական զբաղվածություն և որ ոլորտը՝ ոչ մասնագիտական զբաղվածություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ազատ են դիմելու քոլեջի վարչական անձնակազմին իրենց հուզող ցանկացած հարցով: Չնայած որ քոլեջում վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց առկա չէ, աշխատակազմը միշտ պատրաստակամ է աջակցել ուսանողներին՝ ապահովելով բաց և հասանելի միջավայր: Քոլեջը նաև իրականցրել է հարցումներ՝ գնահատելու համար ուսանողների բավարարվածությունը վարչական ծառայություններից, որոնց մասնակցել է 28 ուսանող: Հարցման արդյունքների համաձայն, ուսանողների 82%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 100%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումների միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են ռեսուրսային հագեցվածությանը, ընթացիկ ուսումնական և միջոցառումների կազմակերպմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի դիրքորոշումը որոշ մասնագիտությունների մասով, այն է՝ 3 տարվա պարբերականությամբ ընդունելության կազմակերպումը, ինչը նպաստում է տարածաշրջանում մասնագետների հոսքի բալանսավորմանը: Այդուհանդերձ, խումբը կարծում է, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել աշխատաշուկայի ուսումնասիրությունների համակարգված և կանոնակարգված մոտեցում, որը հնարավորություն կտա հետագայում առավել ճշգրիտ վերլուծել աշխատաշուկայում առկա թափուր հաստիքներն ու գործատուների կարիքները: Այսպիսի մոտեցումը կնպաստի նաև ռիսկերի նվազեցմանը՝ ապահովելով, որ շրջանավարտները կարողանան հաջողությամբ գտնել իրենց մասնագիտական տեղն աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԲԲՊՔ-ի կողմից իրականացվող մասնագիտական կողմնորոշման միջոցառումները, որոնք նպաստել են վերջին տարիներին դիմորդների քանակի աճին: Ուսանողների թվի աճը, հատկապես որոշակի մասնագիտությունների ուղղությամբ, վկայում է իրականացված միջոցառումների արդյունավետության մասին: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր է գնահատել այդ միջոցառումների արդյունավետությունը՝ դրանց շարունակական բարելավման և կիրառվող մեխանիզմների կատարելագործման նպատակով:

Դրական է, որ քոլեջում առկա են տարբեր մեխանիզմներ, որոնք ուղղված են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը, և որոնք նպաստում են համակարգային կերպով այդ

կարիքների բացահայտմանը: Գովելի է նաև, որ Ուսանողական խորհուրդը հանդիսանում է կարևոր դերակատար ուսանողների խնդիրների բարձրացման և լուծման գործընթացում: Կառույցը լիարժեք ներգրավված է քոլեջի կառավարման գործընթացներում, ինչը խթանում է նրա առաքելության իրականացումը և ուսանողների իրավունքների պաշտպանությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կարիերայի կենտրոնի գործունեությունը, որը տրամադրում է շրջանավարտներին տեղեկատվություն թափուր աշխատատեղերի վերաբերյալ, և ապահովում ուսանողների ներգրավվածությունը տարբեր դասընթացների, սոցիալական և դրամաշնորհային ծրագրերի: Այսպիսի միջոցառումների ընդլայնումը և պարբերական իրականացումը կնպաստի ուսանողների փոխանցելի հմտությունների (soft skills) զարգացմանը: Գովելի է, որ կենտրոնը պարբերաբար հավաքագրում և թարմացնում է նաև շրջանավարտների զբաղվածության և նրանց հետագծի վերաբերյալ տվյալները: Չնայած զբաղվածության ցուցանիշները մեծ չեն, անհրաժեշտ է նշել, որ դրանք հաճախ պայմանավորված են օբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են շրջանավարտների շարունակական կրթությունը և բանակ զորակոչվելը, որը կազմում է ընդհանուր թվի մոտ 45%-ը: Ավելի օբյեկտիվ պատկեր ստանալու համար նպատակահարմար կլինի ուսումնասիրել զորակոչվող շրջանավարտների աշխատանքային հետագիծը նաև զորացրվելուց հետո՝ ապահովելով զբաղվածության տվյալների առավել ամբողջական և իրական պատկեր: Այս մոտեցումը կօգնի ՄՈՒՀ-ին ավելի հստակ գնահատել իր շրջանավարտների կարիքները, ինչպես նաև վեր հանել կարճաժամկետ դասընթացների անհրաժեշտությունը կամ այլ լրացուցիչ ծառայությունների պահանջարկը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲԲՊՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, որոնք ապահովում են ուսանողների քանակի կայուն աճ, առկա է ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, ուսանողները ներգրավվում են սոցիալական և դրամաշնորհային ծրագրերում, ՄՈՒՀ-ում արդյունավետորեն գործում է Ուսանողական խորհուրդը, որն ապահովում է ուսանողների իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև արդյունավետորեն գործում է Կարիերայի կենտրոնը, որը նպաստում է ուսանողների փոխանցելի հմտությունների զարգացմանը և հավաքագրում է տվյալներ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: ԲԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ Քոլեջի ՌԾ-ի՝ ՄՈՒՀ-ն իր առջև նպատակադրել է «ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից և բարենպաստ աշխատանքային միջավայր»: Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում որպես առաջին խնդիր սահմանվել է դասախոսական անձնակազմի համալրումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար 2022թ.-ից քոլեջում գործում է «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ», ըստ որի թեկնածուի հետ նախօրոք ձևավորված մրցութային հանձնաժողովն անցկացնում է մասնագիտական հարցազրույց, մասնակցին առաջադրվում է 5 հարց, որից 3-ը մասնագիտական հարցեր են, 2-ը՝ մեթոդամանկավարժական: Հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Ըստ այդ կարգի, մինչ օրս աշխատանքի են ընդունվել 20 աշխատակից (11-ը մասնագիտական դասախոսներ, 5-ը հանրակրթական և 4-ը վարպետներ):

Վերջին տարիներին քոլեջը ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացման նպատակով կարևորում է գործատու-դասախոսներով կազմը համալրելու անհրաժեշտությունը, մասնավորապես՝ ներկայումս քոլեջի 4 դախոսներ գործատուներ են:

Անհրաժեշտ է նշել, որ Քոլեջում դասախոսների առջև դրված հատուկ պահանջներ որպես այդպիսին առկա չեն, ՄՈՒՀ-ն առաջնորդվում է այն հիմնական պահանջներով, որոնք սահմանված են ՊԿՉ-ներով, մասնավորապես՝ բարձրագույն (նախընտրելի) կամ միջին մասնագիտական կրթություն: Հստակեցված չեն դասախոսի և արտադրական ուսուցման վարպետի նկատմանբ հիմնական պահանջները:

Քոլեջում դասավանդում են 36 դասախոս, 5 արտադրական ուսուցման վարպետ, որոնցից 31-ը (76%) ունեն բարձրագույն կրթություն, 10-ը (24%)՝ միջին մասնագիտական: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ նաև, որ դասախոսները դասավանդում են 1-ից մինչև 9, 10 մոդուներ, սակայն մեկ կիսամյակի ընթացքում դասավանդվող մոդուլները կազմում են մինչև 4:

2020 թվականին Քոլեջում մշակվել է «Դասախոսի խրախուսման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը, որը, սակայն, լիարժեքորեն չի ՄՈՒՀ-ում գործածություն չի գտել: Հնարավորության դեպքում դասախոսական կազմը հիմնականում խրախուսվել է հավասարաչափ: 2024 թվականին նշված փաստաթուղթը վերամշակվել է և ստացել «Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման (այդ թվում՝ ֆինանսական շահադրման) կամ պատասխանատվության ենթարկելու» կանոնակարգ անվանումը: Նոր կանոնակարգի համաձայն, դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը պետք է գնահատվի համապատասխան հանձնաժողովի կողմից, հիմնվելով նրանց իրականացրած աշխատանքների համապարփակ վերլուծության վրա: Սակայն

փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր կանոնակարգը ևս դեռևս ՄՈՒՀ-ի կողմից գործնականում չի կիրառվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միայն արտադրական ուսուցման վարպետների խրախուսման համար քոլեջում պարբերաբար անց է կացվում «Տարվա լավագույն վարպետ» մրցույթը; Ընտրության համար չափանիշեր են հանդիսանում մասնագիտական հմտությունները, ուսանողի առաջընթացը, նախաձեռնողականությամբ հանդես գալը, գործընկերներին աջակցություն տրամադրելը և այլն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ այս չափանիշերը ոչ մի կարգով ամրագրված չեն, քննարկումների արդյունքում դրանք սահմանվել և արձանագրվել են միա յն արձանագրությունների մատյանում:

ԲԲՊՔ-ն դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ է համարում նաև դասալսումները և ուսանողների կողմից դասախոսների և նրանց վարած դասընթացների գնահատումը: Քոլեջն ունի 2020թ-ին մշակված «Ամբիոնների դասալսումների անցկացման և քննարկման կանոնակարգ», դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց և դասալսումների անցկացման ձևաթերթ: Ըստ գործող կանոնակարգի, դասալսումները անց են կացնում ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, ամբիոնի վարիչը, մեթոդական միավորումների նախագահները, այլ դասախոսներ: Դասալսումների ընթացքում գնահատվում է դասախոսի մասնագիտական, մանկավարժական, մեթոդական պատրաստվածությունը, դասը վարելու ժամանակակից մեթոդների կիրառումը, կազմակերպչական, «ուսանող-դասախոս» հարաբերությունների ձևավորման ունակությունները և այլն: Դասալսումների արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում են փոխադարձ դասալսումներ ներքին լավ փորձը տարածելու նպատակով: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ սեմինար-քննարկումների ժամանակ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները պլանավորված և կանոնակարգված են: Դասախոսական կազմի աշխատանքի գնահատման մեկ այլ ձև է ուսանողների շրջանում հարցումների իրականացումը, որոնց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում բավարարված են դասախոսների աշխատանքից:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջը դասախոսական անձնակազմի վերապատրաստումների համար նախատեսում է 120.000 դրամ, որը սակայն չի ծախսվել: Ինչ վերաբերում է դասախոսական կազմի վերապատրաստումներին, ապա պետք է նշել, որ Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մեթոդական վերապատրաստումներին: Անհրաժեշտ է նաև նշել, որ վերջին երեք տարիներին մի քանի դասախոսներ մասնակցել են նաև տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված որոշ դասընթացների, սեմինարների, օրինակ՝ «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից իրականացվող «Քաղաքացիական կրթություն ուսուցանողների համար», «Կրթության կազմակերպման ներառականությունը» և այլն:

Վերջին մեկ տարվա ընթացքում, կամավոր ատեստավորմամբ պայմանավորված, պետության կողմից կազմակերպված մասնագիտական վերապատրաստումներին մասնակցել են քոլեջի 3 դասախոս՝ 2-ը ՏՏ ուղղությունից և 1-ը՝ խոհարարության: Վերջիններս նաև ատեստավորված դասախոսներ են: Մասնագիտական այլ վերապատրաստումներ տեղի չեն

ունեցել, որի պատճառն է նաև դասախոսական անձնակազմի մասնագիտական կարիքների ոչ բավարար ուսումնասիրումը և վեր հանումը:

Կադրերին զարգացնելու և սկսնակ դասավանդողներին մեթոդական և մանկավարժական աջակցություն ցուցաբերելու նպատակով նախնական մասնագիտական կրթական ծրագրերում գործում է «Սկսնակ մանկավարժների ակումբը», իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրերում՝ «Առաջավոր փորձի դաշտ» ակումբը: Ակումբների շրջանակներում յուրաքանչյուր սկսնակ դասախոսին կցվում է մենթոր (հասարակական հիմունքներով), ով տրամադրում է խորհրդատվություն և իրականացնում դասալսումներ: Մենթորները ակումբում ներկայացնում են նաև զեկուցումներ դասի պլանավորման, դուալ կրթության կազմակերպման և այլ թեմաների վերաբերյալ: Ակումբի աշխատանքները կազմակերպվում են տարեկան պլանի համաձայն: 2024-2025 ուսումնական տարում ակումբում ընդգրկված են 6 սկսնակ դասախոս և 3 մենթոր:

Քոլեջը մշակել է նաև սկսնակ դասախոսների դասալսման համար նախատեսված ձևաչափ, որը ներառում է թվային գնահատում՝ մինչև 70 միավոր: Գնահատման ձևաչափով սահմանված է 19 չափանիշ, որոնցից յուրաքանչյուրն ունի 0-ից 4 միավորի գնահատման սանդղակ: Գնահատման չափանիշներից են՝ ուսանողին տրամադրվող հետադարձ կապը, տրվող առաջադրանքները, լսարանի կառավարումը և այլն: Վերջում մենթորները տրամադրում են նաև հանձնարարականներ՝ ընդգծելով դասախոսի առաջընթացը նախորդ դասալսումների համեմատ և առաջարկելով խորհրդատվություն՝ բարելավման ուղղությամբ: Օրինակ՝ խորհուրդ է տրվում նյութը ներկայացնել պարզ և առավել մատչելի ձևով՝ նվազեցնելով մասնագիտական տերմինների օգտագործումը: 2023-2024 ուսումնական տարում քոլեջը կատարել է սկսնակ դասախոսների կարիքների գնահատում, որի արդյունքում սկսնակները գնահատել են ակումբի և մենթորների աշխատանքի արդյունավետությունը, ակումբի շրջանակներում անցկացված սեմինարների արդյունավետությունը, ինչպես նաև իրենց տրվող աշխատանքային միջավայրի և առկա հիմնական խնդիրների վերաբերյալ իրենց կարծիքը: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ սկսնակ դասախոսները հիմնականում բավարարված են ակումբի գործունեությունից:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 49 է: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին նաև, որ քոլեջի դասախոսական կազմի հոսունությունը մեծ թիվ չի կազմում, գրանցված դեպքերում էլ հիմնական պատճառներից են բնակավայրի փոփոխությունը և ավելի բարձր վարձատրությամբ աշխատանքի անցնելը:

Քոլեջի որոշ հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ընդգրկված են նաև դասավանդման գործընթացներում: Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, շարունակաբար փորձում է համալրել իր դասախոսական կազմը մասնագիտական բարձր որակներ ունեցող դասախոսներով, ինչը նպաստում է կրթական գործընթացների շարունակականությանը: Գովելի է ՄՈՒՀ-ի մոտեցումը դասախոսական կազմը գործատու ներկայացուցիչներով համալրելու ուղղությամբ, որը կնպաստի ուսանողների պրակտիկ հմտությունների զարգացմանը, նեղ

մասնագիտական ուղղություններով մոդուլների դասավանդման որակի բարելավմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է այս քաղաքականության շարունակականության ապահովումը:

Փորձագիտական խումբը կարևորում է 2024 թ. լրամշակված «Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման» նոր կարգի կիրառումը, որը կնպաստի դասախոսական կազմի կարիքների ավելի օբյեկտիվ գնահատմանը և նպատակային վերապատրաստումների կազմակերպմանը՝ ապահովելով կադրերի շարունակական և թիրախային զարգացումը: Բացի այդ, տարբեր օղակների կողմից իրականացվող ընթացիկ դասալսումները դիտարկվում են որպես կարևոր գործիք՝ քոլեջում դասավանդման և ուսուցման գործընթացների վերահսկման և գնահատման համար: Դասալսումների արդյունքների միասնական և դինամիկ վերլուծությունը, ինչպես նաև դրանց հիման վրա խնդիրների վերհանումը, հնարավորություն կտան ստանալ դասախոսական կազմի մասնագիտական որակների, նրանց կարիքների ու պահանջների ամբողջական և օբյեկտիվ պատկեր: Սա, իր հերթին, կօգնի քոլեջին առավել համակարգված ձևով կազմակերպել փորձի փոխանակման ծրագրեր և վերապատրաստման միջոցառումներ՝ նպաստելով դասավանդման որակի շարունակական բարելավմանը:

Դրական է արձանագրել, որ քոլեջի դասախոսական անձնակազմը մասնակցում է մեթոդական վերապատրաստումների, որոնք նպաստում են ժամանակակից դասավանդման մեթոդների կիրառմանը և մոդուլային համակարգով դասավանդմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կտա դասախոսներին ծանոթանալ ոլորտի նորարարություններին և նպաստել նրանց մասնագիտական աճին: Խումբը նշում է, որ վերապատրաստումները կարող են դառնալ առավել հասանելի և իրագործելի, եթե ՄՈՒՀ-ը նախատեսի առանձին բյուջե և ծախս այս նպատակով: Բյուջետային միջոցների ձևավորումը հնարավոր է իրականացնել ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման, ինչպես նաև գործընկերային կապերի արդյունավետ օգտագործման միջոցով, ինչը, փորձագիտական խմբի կարծիքով, իրատեսական է քոլեջի համար: Բացի այդ, դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին կարող են նպաստել նաև մասնագիտական քննարկումները հրավիրված գործատու ներկայացուցիչների, ինչպես նաև հանդիպումները (նաև առցանց) այլ քոլեջների մասնագետների հետ:

Ինչ վերաբերում է դասախոսական կազմի խրախուսմանը, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ գնահատման արդյունքների հիման վրա խրախուսման մեխանիզմների կիրառումը կարող է կարևոր ազդեցություն ունենալ դասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացման վրա: Այս մոտեցումը կնպաստի ոչ միայն դասախոսների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, այլև նրանց մասնագիտական կարողությունների զարգացման ձգտմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև երիտասարդ կադրերով քոլեջի դասախոսական կազմը համալրելու քաղաքականությունը, ինչը միտված է դասախոսական կազմի սերնդափոխությանը և երաշխավորում է կրթական ծրագրերի իրականացման կայունությունը: Այս տեսանկյունից գնահատելի են նաև երիտասարդ դասավանդողների հետ տարվող աշխատանքները, նրանց մեթոդապես պատրաստելու և աջակցելու մանկավարժական անձնակազմի պատրաստակամությունը: ՄՈՒՀ-ում ներդրված մենթորության համակարգը փորձագիտական խմբի կողմից դիտարկվում է որպես լավագույն փորձ: Փորձագիտական

խումբը գտնում է, որ դասախոսական կազմի կայունության ապահովման տեսանկյունից կարևոր կարող է լինել նաև դասախոսական կազմի ռեզերվի ձևավորումը գործընկերային կապերի օգտագործման միջոցով, ինչը կնպաստի կադրերի սերնդափոխության ապահովմանը և կմեծացնի որակյալ կադրերի ընտրության հավանականությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջն ունի դասախոսական կազմի ընտրության, երիտասարդացման քաղաքականություն, նկատելի է միտում գործատու դասախոսական կազմ ներգրավելու ուղղությամբ, առկա են դասախոսական կազմի գնահատման որոշ մեխանիզմներ, իրականացվում են լավ փորձի տարածման ներքին միջոցառումներ, առկա է արդյունավետ մենթորության համակարգ, ներդրվում են դասախոսական կազմի կայունությանը նպաստող մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: ԲԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Հետազոտական աշխատանքների իրականացումը ՄՈՒՀ-ի ռազմավարական առաջնահերթություններից է: 2020-2024թթ Ռազմավարական ծրագրում որպես ռազմավարական զարգացման ուղղություն նշվում է «ստեղծել նախադրյալներ և նպաստավոր մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողության ներգրավվածության ընդլայնման համար»: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չնայած հետազոտական աշխատանքների իրականացումը ռազմավարական առաջնահերթություն է, սակայն հետազոտական բաղադրիչը հստակ դրված չէ բոլոր կրթական ծրագրերի և ուսանողների տրամադրվող առաջադրանքների հիմքում:

Քոլեջում որոշակիորեն իրականացվում են հետազոտական աշխատանքներ «Զբոսաշրջություն», «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում՝ ուսումնասիրությունների տեսքով: Օրինակ՝ «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ի ուսանողները ուսումնասիրում են տարածաշրջանի տեսարժան՝ բացահայտված և չբացահայտված վայրերը, հյուրանոցների գնային քաղաքականությունը, ինչպես նաև մատուցվող լրացուցիչ ծառայությունները: Այս ուսումնասիրությունների հիման վրա ձևավորվում են առաջարկություններ, որոնք ներկայացվում են բուկլետների, պաստառների և տեսահոլովակների տեսքով: Մասնավորապես, «Զբոսաշրջության զարգացման միտումները Բերդ համայնքում» և «Փորձառական զբոսաշրջության զարգացման միտումները Հայաստանում» թեմաներով ուսումնասիրությունների արդյունքում մշակվել են գործնական առաջարկություններ, որոնք

արդեն իսկ կիրառվում են «Սորաններ›› դենդրոպարկում: Օրինակ՝ ուսանողներն առաջարկել են Բերդ համայնքում զարգացնել արկածային և էքստրեմալ տուրիզմը իր բազմազան տեսակներով, ինչպես նաև տարածաշրջանում իրադարձային տուրիզմի զարգացման նպատակով ապահովել տեղեկատվություն նաև միջազգային հարթակներում: Անհրաժեշտ է նշել, «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ի շրջանակում տարածաշրջանն ունի հետազոտություններ կատարելու լայն հնարավորություններ՝ մասնավորապես արգելոցների մասով:

«Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողներին հանձնարարվում են ինքնուրույն աշխատանքներ, ռեֆերատներ տարբեր մոդուլների շրջանակներում, այս աշխատանքներն առավելապես մասնագիտական գրականության վերլուծություններ են, որտեղ գործնական բաղադրիչը գրեթե բացակայում է: «Դեղաբանություն» ՄԿԾ-ի շրջանակներում իրականացնում են մակրո (մանրադիտակային հետազոտություն) և միկրո ուսումնասիրություններ, օրինակ՝ ուսանողները գործնական դասերի ընթացքում հավաքում են տարածաշրջանին բնորոշ դեղաբույսերը, դրանք նկարագրում ըստ համապատասխան չափորոշիչների, պատրաստում են հերբարիումներ, կատարում մանրադիտակային նկարագրություններ: Առավել խորքային հետազոտություններ իրականացնելու համար ՄՈՒՀ-ը վերջին ժամանակահատվածում ձեռք է բերել նոր սարքավորումներ, սակայն փորձագիտական այցի ընթացքում դրանք դեռևս ամբողջությամբ չէին հարմարեցվել լաբորատորիային, օրինակ՝ թորման սարքը:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում չունեն տպագրված ձեռնարկներ, գրքեր, ուղեցույցներ, սակայն դասագրքերի պակասը լրացնելու համար յուրաքանչյուր մոդուլի կամ առարկայի համար դասախոսներն ուսումնասիրում են տարբեր աղբյուրներ ուսանողներին տրամադրվող ուսումնառության նյութերի փաթեթներ պատրաստելու համար: Անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման մեխանիզմներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն իր ռազմավարական ծրագրում ընդգրկել է հետազոտական գործունեության զարգացումը որպես կարևոր ուղղություն: Դրական է նաև, որ որոշ մասնագիտական կրթական ծրագրերում տեսանելի են հետազոտական աշխատանքների որոշ հաջողված օրինակներ: Այնուամենայնիվ, խումբը կարևորում է հետազոտական բաղադրիչի ներառումը բոլոր կրթական ծրագրերում և ուսանողներին տրամադրվող առաջադրանքներում՝ որպես ինստիտուցիոնալ զարգացման կարևոր պայման:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը կարիք կունենա մշակելու «Հետազոտական գործունեության քաղաքականություն», որն անհրաժեշտ հիմք կդառնա հետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման համար: Բացի այդ, անհրաժեշտ է ներդնել մեխանիզմներ դասախոսական և ուսանողական կազմերի հետազոտական աշխատանքները խթանելու համար: Դասախոսական կազմի դեպքում հետազոտական աշխատանքների իրականացումը կարող է լինել դասախոսին ֆինանսական խրախուսում տրամադրելու հիմնական չափանիշներից մեկը:

Դասավանդման փորձառության և մասնագիտական հմտությունների հիման վրա դասախոսները կարող են իրականացնել նաև մեթոդական և մանկավարժական

ուսումնասիրություններ՝ լավագույն փորձը տարածելու, նոր խնդիրների սահմանման և արդյունավետ դասավանդման մեթոդներ մշակելու նպատակով: Բացի այդ, առավել կիրառական հետազոտությունների իրականացման համար ՄՈՒՀ-ը պետք է ապահովի նոր ձեռք բերված սարքավորումների լիարժեք հարմարեցումը լաբորատորիաներին, հատկապես՝ դեղագործության բլոկում: Այս քայլը կնպաստի ուսանողների հետազոտական հմտությունների ձևավորմանը և կբարձրացնի նրանց մոտիվացիան՝ մասնագիտական ոլորտում հաջողությունների հասնելու համար:

Կիրառական հետազոտությունների զարգացումը թույլ կտա ինչպես ուսանողներին, այնպես էլ դասախոսներին ակտիվորեն մասնակցել մասնագիտական հետազոտություններին՝ բարձր ացնելով ուսումնառության արդյունավետությունը և մասնագիտական առաջընթացի հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԲԲՊՔ-ը չունի հետազոտությունների իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացված հետազոտական բնույթի աշխատանքները համակարգված բնույթ չունեն և ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչը թույլ է արտահայտված, ուսանողները և դասախոսները ներգրաված չեն հետազոտական աշխատանքներում, բացակայում են հետազոտական գործունեության խթանման մեխանիզմները, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Բերդի բազմագործառութային պետական տարածաշրջանային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Բերդի բազմագործառութային պետական քոլեջի 2020-2024թթ. ՌԾ-ի խնդիրներից է ստեղծել նպաստավոր պայմաններ ուսումնառության գործընթացների էական բարելավման համար: Այդ նպատակով նախատեսվում է բարելավել և արդիականացնել նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները՝ լսարաններն ու լաբորատորիաները, ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն իրականացրել է լսարանների վերանորոգում, շենքային պայմանների բարելավում: Հարկ է նշել, որ ռեսուրսների ձեռքբերումը և ենթակառուցվածքների վերանորոգումը իրականացվում են պարբերաբար նվիրատվությունների և դրամաշնորհային ծրագրերի միջոցով:

ՄՈՒՀ-ն ունի երեք մասնաշենք, որոնցից առաջին մասնաշենքի ընդհանուր մակերեսը կազմում է 796.51 մ² (բակային տարածքը՝ 1288.6 մ²), երկրորդ մասնաշենքը՝ 461.77 մ² (բակային տարածքը՝ 475.21 մ²), իսկ երրորդ մասնաշենքը՝ 566.83 մ² (բակային տարածքը՝ 2000 մ²): Առաջին

և երրորդ մասնաշենքերը հիմնանորոգված են և ՄՈՒՀ-ի սեփականությունն են, իսկ երկրորդ մասնաշենքն ունի հիմնանորոգման կարիք և ՄՈՒՀ-ին տրամադրված է անհատույց տնօրինման իրավունքով: Մասնաշենքերը իրարից գտնվում են զգալի հեռավորության վրա: Վերջին տարիներին տնօրինությունը լուծել է շենքերում ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի հողորդակցության հարցը՝ ապահովելով ՄՈՒՀ-ը սեփական փոխադրամիջոցով՝ միկրոավտոբուսով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ղեկավար անձնակազմը նպատակադրված է ՄՈՒՀ-ը տեղակայել մեկ ընդհանուր համալիր կառույցում՝ կրթական և կառավարչական գործընթացներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: Դա է նաև պատճառը, որ երկրորդ մասնաշենքում, որն ունի հիմնանորոգման կարիք, վերանորոգման ուղղությամբ ակտիվ աշխատանքներ դեռևս չեն իրականացվում:

3 մասնաշենքերում ՄՈՒՀ-ն ունի 21 լսարան, 17 մասնագիտական կաբինետներ և լաբորատորիաներ՝ այդ թվում դեղագործության, անասնաբուժության, խոհարարության, վարսահարդարման, կարի արտադրության, 2 էլեկտրափականագործական և 1 ավտոէլեկտրականության: Լաբորատորիաների մեծ մասն ունեն համապատասխան նյութատեխնիկական հագեցվածություն:

Անասնաբուժության լաբորատորիան համալրված է վիրահատական հավաքածուով, մանրադիտակով, եղջերատիչով, ծննդաբանական գործիքներով և արհեստական սերմնավորման պարագաներով: **Գինեգործության առանձին լաբորատորիան** դեռևս պատրաստ չէ, սակայն պահեստում առկա են նմուշառման սարքեր, չափիչ բաժակներ, ռետինե խողովակներ, 230 լիտրանոց տարաներ, ալկոհոլի չափման գործիքներ, ռեֆրակտոմետր և այլ սարքավորումներ: **Դեղագործության լաբորատորիան** վերազինվել է 2023-2024 ուսումնական տարում՝ ապահովելով ուսումնական փորձերի համար անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ: **«Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության լաբորատորիան** համալրված է էլեկտրական սարքերով (շաղափիչ, կտրիչ, հղկման սարք, էլեկտրազոդման գործիքներ), ինչպես նաև ՎԱԶ, ԶԻԼ, ՈՒԱԶ մեքենաների մասերով և տարբեր ձեռքի գործիքներով: Վերջին տարում լաբորատորիան համալրվել է ավտոմեքենաների զննման ախտորոշիչ սարքով: **Կարի լաբորատորիան** ներառում է 5 արտադրական և 5 կենցաղային կարի մեքենաներ, մաքրակար անող սարքավորումներ, 1 մասնագիտական հարդուկ, մի քանի կենցաղային հարդուկներ, մանեկեներ և այլ անհրաժեշտ պարագաներ: Այս գույքը ձեռք է բերվել «Վարդանանց ասպետներ» հայ-ամերիկյան հայրենասիրական ՀԿ-ի ֆինանսական աջակցությամբ: Անհրաժեշտ է նշել, որ ընդհանուր առմամբ ՀԿ-ն քոլեջին տրամադրել է շուրջ 30.000 ԱՄՆ դոլար նյութատեխնիկական զինվածությունը համալրելու նպատակով: **Վարսահարդարման լաբորատորիան** ունի 1 մասնագիտական լվացարան, ջրատաքացման կաթսա, 4 սպասարկման աթոռ և հայելի, մազերի չորացնող սարք և մատնահարդարման պարագաներ: **Խոհարարության լաբորատորիան** համալրվել է ՀՕՖ հիմնադրամի աջակցությամբ, այն ունի սառնարան, գազօջախ, ջեռոցներ, ջրատաքացուցիչ, հարիչ և այլն: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լաբորատորիայի տեխնիկան, գործիքներն ու սարքավորումները հիմնականում կենցաղային նշանակության են: Աշխատանքային միջավայրը մինիմալ հարմարեցված է դասապրոցեսի կազմակերպման համար, անհրաժեշտ է նշել, որ ջերմային մշակման գործընթացի անվտանգության պայմանները բավարար չեն (կիրառվում է գազի անոթ (բալոն)): Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը ձեռք է բերել գազօջախ, որը չի կարողանում կիրառել ոչ մշատական գազմատակարարում չունենալու պատճառով:

2020 թվականին համագործակցելով «Ֆերտի» ՀԿ-ի հետ՝ ՄՈՒՀ-ում ՄԱԶԾ-ի ֆինանսական աջակցությամբ ստեղծվել է **վերականգնվող էներգիայի աղբյուրների ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կենտրոն-լաբորատորիա։ Զբոսաշրջության կաբինետը** հագեցած է տեսացրիչով և սմարթ գրատախտակով։

ՄՈՒՀ-ն ունի 80մ^2 մարզադաշտ և 67,8մ^2 մարզասրահ, մարզական գույքից առկա են բադմինտոն, գորգիկներ, 4 վարժասարքեր, թենիսի սեղան, շախմատ, գնդակներ, ցատկապարան և այլն։ ՄՈՒՀ-ն ունի 10 նոութբուքեր և 2 համակարգչային լսարան՝ համալրված 2 տեսացրիչով և 31 ստացիոնար համակարգիչներով։ Համակարգիչների տեխնիկական պարամետրերը բավարարում են «Համակարգիչների շահագործում» մասնագիտության մոդուլների դասավանդմանը։ Լսարաններից մեկի համակարգչային տեխնիկան ձեռք է բերվել «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի աջակցությամբ, իսկ նոութբուքերը ձեռք են բերվել MAVETA ծրագրի շրջանակներում։ Պետք է նշել, որ «Համակարգիչների շահագործում» մասնագիտության ուսանողները մասնակցում են դասացուցակի, օրացույցների, պաստառների, գովազդային թռուցիկների և այլ ձևաթղթերի ու գրքույկների կազմման ու տպագրման աշխատանքներին։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ն ունի ցուցապաստառներով, մուլյաժներով և անհրաժեշտ լաբորատոր գույքով զինված քիմիայի, կենսաբանության, ՆԶՊ-ի կաբինետներ։ ՄՈՒՀ-ն ունի գրադարան, գրադարանային ֆոնդը կազմում է 5335 տպագրական միավոր։ Այն ներառում է դասագրքեր, գեղարվեստական գրքեր, մասնագիտական գրականություն։ Մասնագիտական գրականությունը հիմնականում ուսումնական ձեռնարկներն են (1030 միավոր)։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հայերեն և ռուսերեն լեզուներով է։ Գրադարանը թվայնացված չէ։ Ռեսուրսների դիտարկման արդյունքում պարզվեց, որ հանրակրթության ՊԿՉ-ների փոփոխմամբ պայմանավորված՝ նոր հրատարակության հանրակրթության դասագրքերի ձեռքբերումը դեռ ամբողջական չի իրականացվել, այն բավարարում է ՄՈՒՀ-ի դասագրքերի պահանջարկը 90%-ով։

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ դասախոսական, ուսումնաօժանդակ, ադմինիստրատիվ և տեխնիկական անձնակազմի աշխատավարձի ֆոնդը կազմում է ՄՈՒՀ-ին ուղղված պետական հատկացումների 84,19%։ Ըստ 2023թ. ՄՈՒՀ-ի բյուջեի բաշխման տվյալների՝ քոլեջը դրամական հատկացումներ է տրամադրել կրթաթոշակին (6,49%), ուսման վարձերի զեղչերին (1,21%), գույքի ձեռքբերմանը (0,35%), դասախոսների մասնագիտական զարգացմանը (0,07%), գործուղմանը (0,33%), հրատարակումներին (0,13%) և տնտեսական ծախսերին (5,08%)։ 2023 թ. տվյալներով, քոլեջի բյուջետային մուտքերի 92,27% պետական ֆինանսավորմամբ է, 7,73%՝ արտաբյուջետային մուտքերն են, որոնք հիմնականում գոյանում են ուսանողների վարձավճարներից (3 տարվա մեջ ուսանողների վարձավճարներից գոյացող մուտքերը աճել են 1,12%-ից 7,51%)։ Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի արձանագրվել։ ՄՈՒՀ-ը կիրառում է վարձավճարների զեղչման ռոտացիոն համակարգ՝ խթանելով բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին։ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով ուսանողներին տրամադրվում են կրթաթոշակ և նպաստ։ ՄՈՒՀ-ն իրականացնում է կարճաժամկետ դասընթացներ կրթական ծրագրերի ուղղություններին համապատասխան, սակայն լրացուցիչ կրթական ծրագրերը սակավ են, և երեք տարվա

կտրվածքով բյուջետային մուտքերում «Վճարովի դասընթացներ» տողի դիմաց մուտքեր չեն գրանցվել։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը մասնակցում է դրամաշնորհային ծրագրերի։ 2024թ. ՄՈՒՀ-ը մասնակցել է WINNET կազմակերպության կողմից անցկացվող բնապահպանական մրցույթին և արժանացել դրամական պագևի, որն ուղղելու է համայնքի բարեկարգմանը։ ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն։
ՄՈՒՀ-ը պաշտոնական նամակագրությունը ԿԳՄՄՆ-ի և այլ գերատեսչությունների հետ վարում է Mulberry համակարգով, հաստատության ներսում տեղեկատվության տարածման համար ՄՈՒՀ-ն օգտագործում է իր էլեկտրոնային փոստը։ Ներքին փաստաթղթաշրջանառությունն ապահովում են թղթային եղանակով։ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ։ ՄՈՒՀ-ը ունի ինտերնետային հասանելիություն մասնաշենքերից 2-ում։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային անվտանգության համար նախատեսված կրակմարիչներ և ազդանշանային համակարգ (ոչ ինքնաշխատ), 3 մասնաշենքերից 2-ում անվտանգության նպատակով տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, հարկերում առկա են տարհանման պլաններ։ ՄՈՒՀ-ի մեկ մասնաշենքում առկա է բուժկետ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև ՄՈՒՀ-ը չունի հենաշարժողական խնդիր ունեցող ուսանողներ, այնուամենայնիվ շենքային պայմանները հարմարեցված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար։

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի իրականացման համար մեկ ուսանողին անհրաժեշտ նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել։ Գնումների գործընթացը իրականացվում է ստորաբաժանումների կողմից ներկայացրած պահանջագրերի հիման վրա, որոնք ներկայացվում են Կառավարման խորհրդի քննարկմանը։ Անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն։ 2023-2024 թթ. ՄՈՒՀ-ն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով գնվել են պահարան և կախիչ։ Ուսանողներին հուզող հարցերը (այդ թվում անհրաժեշտ ռեսուրսներին վերաբերող) հնչեցվում են նաև ՈՒԽ-ի միջոցով, որը, օրինակ, միջոցառումների անցկացման համար դիմել է բարձրախոս և խոսափող ձեռք բերելու առաջարկով, այն ստացել է տնօրինության դրական արձագանքը։

ՈՆԱ կենտրոնը անցկացնում է ուսանողների և դասախոսների շրջանում ռեսուրսների հասանելիությունից, շենքային պայմաններից, անվտանգությունից բավարարվածության աստիճանը որոշող հարցումներ, հարցաշարերից հասկանալի է, որ դրանք վերհանում են քանակական տվյալներ։ Արդյունքների վերլուծությունը բաց աղբյուրներում հասանելի չէ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ը, հետևելով 2020-2024թթ. ՌԾ-ի հիմնախնդիրներին, ձգտում է համալրել նյութատեխնիկական բազան առկա և նոր ՄԿԾ-ների իրականացման համար և ունենալ բարելավված ենթակառուցվածքներ։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսների ձեռքբերման գործընթացում ՄՈՒՀ-ը կարիք ունի քննարկումներ ունենալ տվյալ ոլորտի մասնագետների հետ՝ եղած միջավայրին համապատասխան սարքավորումներ ձեռք բերելու համար։ Վերջինս կնպաստի թիրախային ռեսուրսի ձեռքբերմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի աշխատանքները արտաբյուջետային ռեսուրսների ներգրավման ուղղությամբ, մասնավորապես՝ ՄՈՒՀ-ի մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին, ինչը ռազմավարական ծրագրի հիմնախնդիրների լուծման գրավականն է:

Ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման համար առավել կարևոր է ունենալ 1 ուսանողի համար արված անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկ: Սա հնարավորություն կտա կանխատեսել ֆինանսական հատկացումները ըստ մասնագիտության և հստակ պլանավորել դասը:

Փորձագիտական խումբը կարևորում է ՄՈՒՀ-ի քայլերը գրադարանային ֆոնդի համալրման ուղղությամբ: Այս գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարևոր է շեշտադրել անհրաժեշտ մասնագիտական գրականության ձեռքբերումը: Որպես գրականության համալրման եղանակ կարևոր է դիտարկել նաև առցանց աղբյուրները, որոնց հասանելիությունը մեծ է, միևնույն ժամանակ դրանք մեծ ֆինանսական միջոցներ չեն պահանջում:

Կարևոր է նշել, որ ուսումնական գործընթացի կազմակերպման համար ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովել է անվտանգ և համապատասխան միջավայր: Սակայն անվտանգության որոշ հարցեր, մասնավորապես «Խոհարարական գործ» մասնագիտական լաբորատորիայում գազի ոչ մասնագիտացված անոթի (բալոնի) օգտագործումը, մնում են մտահոգիչ և պահանջում են լրացուցիչ ուշադրություն ու բարելավում:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՄՈՒՀ-ի կողմից ներքին շահակիցների շրջանում ռեսուրսներից բավարարվածության հարցումների անցկացումը, քանի որ դրանք նպաստում են կարիքների վերհանմանը: Սակայն ՄՈՒՀ-ի գործունեության բարելավման նպատակով առավել կարևոր է հարցման ձևաչափում ներառել որակական տվյալներ վերհանող հարցեր, ինչը հնարավորություն կտա ՄՈՒՀ-ի ռեսուրսների մասով կատարել որակական վերլուծություն: Հարցումների մեջ ներառել ոչ միայն բևեռային (այո-ոչ), այլ նաև հատուկ հարցեր, որոնք թույլ կտան ծանոթանալ հարցվողների կարծիքին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջը հետևողականորեն բարելավում է իր նյութատեխնիկական բազան՝ ապահովելով պայմաններ ներդրված մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) արդյունավետ իրագործման համար, ինչպես նաև ռեսուրսների ձեռքբերման նպատակով ներգրավում է տարբեր ֆինանսավորման աղբյուրներ, և որ ՄՈՒՀ-ում առկա է հիմնականում ապահով և անվտանգ ուսումնական միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ ԲԲՊՔ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին փորձագիտական խումբը գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան, կիսամյակային և եռամսյակային կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց ղեկավարին՝ ըստ հիերարխիկ կապերի: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները հիմնականում կրում են նկարագրական բնույթ իրականացված գործընթացների վերաբերյալ: Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների վերլուծության հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության վերաբերյալ, որը քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է: Հարկ է նշել, որ հաշվետվությունները հիմնականում չեն բխում ՌԾ նպատակներից: Բացի ներքին հաշվետվողականությունից, քոլեջն ապահովում է նաև արտաքին հաշվետվություններ պետական գերատեսչություններին:

Քոլեջի ՌԾ-ի հիմնախնդիրներից է հասարակության հետ կապերի հետագա զարգացման, հանրային ծրագրերում քոլեջի առավելագույնս ներգրավման ապահովումը: Այս հիմնախնդրի լուծման համար քոլեջն ապահովում է իր գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով Ֆեյսբուք սոցիալական ցանցը, որն ունի ավելի քան 3640 հետևորդներ, որտեղ անընդհատ թարմացվող տեղեկատվության միջոցով լուսաբանվում են քոլեջի առօրյան, անցկացվող միջոցառումները, հաջողությունները, կազմակերպած դասընթացները:

2024-2025 ուստարվանից քոլեջում նախաձեռնվել է տեղեկատվության հասանելիության և թափանցիկության ապահովման նոր հարթակի ստեղծումը՝ պաշտոնական կայքէջի տեսքով: Ներկայումս նախագիծը գտնվում է բազայի տվյալների ներմուծման փուլում: Ապագայում, երբ կայքը կհամալրվի անհրաժեշտ փաստաթղթերով և տեղեկատվությամբ, այն կգործարկվի: Կայքը նախատեսված է լինելու եռալեզու՝ առաջին փուլում ապահովելով հայերեն լեզվով տեղեկատվության հասանելիությունը:

Ներքին շահակիցների շրջանում տեղեկատվություն ապահովելու նպատակով Քոլեջի բոլոր մասնաշենքերի պատերին փակցված են տեղեկատվական թերթիկներ, պաստառներ, անցկացված միջոցառումները լուսաբանող պատի թերթեր:

ՄՈՒՀ-ը կազմակերպում է հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանը միտված տարբեր միջոցառումներ: Մասնավորապես, քոլեջն ունեցել է կարճաժամկետ դասընթացների իրականացման փորձ՝ ուղղված մասնագիտական գիտելիքների ձեռքբերմանը, ինչպիսիք են «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Համակարգչային օպերատորություն» և այլ մասնագիտությունները: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ դրանք վերջին երեք տարիներին չեն իրականացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը պլանավորում է իրականացնելու կարճաժամկետ դասընթացներ տրակտորիստ-մեքենավարների, եռակցողների համար: Էլեկտրաեռակցման գործիքները ՄՈՒՀ-ն արդեն իսկ ձեռք է բերել «Վարդանանց ասպետներ»

հայ-ամերիկյան հայրենասիրական ՀԿ-ի ֆինանսական աջակցությամբ: Անհրաժեշտ է նշել, որ կարճաժամկետ դասընթացներ ներդնելիս Քոլեջը վերջիններիս կարիքի խորքային վերլուծություններ չի իրականացրել:

Հասարակությանը արժեքներ փոխանցելու նպատակով ՄՈՒՀ-ի «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» ՄԿԾ-ի ուսանողները կամավորական հիմունքներով իրականացնում են ծառայություններ, օրինակ մեծահասակների համար անվճար մազերի կտրում, իսկ «Դերձակ» մասնագիտության ուսանողները անվճար հիմունքներով կարել են սպիտակեղեն:

ԲԲՊՔ-ն նախաձեռնել և կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնք ունեն կարևոր հասարակական և քաղաքացիական նշանակություն Բերդ համայնքի համար: Դրանց թվում է ՄՈՒՀ-ի մասնաշենքերից մեկի տարածքում 44-օրյա պատերազմի ընթացքում համայնքի զոհերի հիշատակը հավերժացնող պուրակ-կոթողի ստեղծումը, Հայաստանի առաջին հանրապետության 105-րդ տարեդարձին նվիրված «Լույսի և փառքի ուղի» քայլերթը և Խորանաշատ վանական համալիրի 800-ամյակին նվիրված միջոցառմանը մասնակցությունը: Վերջինիս ընթացքում ԲԲՊՔ ուսանողները իրականացրել են տեղեկատվական և լուսաբանման աշխատանքներ՝ պատրաստելով համալիրի պատմության վերաբերյալ փոքրածավալ գրքույկներ (բրոշյուրներ), պաստառներ, օրացույցներ և հուշանվերներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ՝ ըստ հիերարխիկ կապերի, որը թույլ է տալիս քոլեջում իրականացվող գործընթացների մասին տեղեկատվությունը հասանելի դարձնել քոլեջի հիմնական շահակիցներին: Միաժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի զարգացումը, որը կնպաստի քոլեջի կարիքների և խնդիրների վերհանմանը և հաշվետվողականության գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, հաշվետվությունների ձևաչափը անհրաժեշտ է կապակցել ՌԾ նպատակների հետ, որ հնարավորություն կընձեռի ՄՈՒՀ-ին գնահատելու ՌԾ նպատակների և խնդիրների ձեռքբերումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ներքին և արտաքին շահակիցներին ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և թափանցիկությունն ապահովող մեխանիզմների առկայությունը, ֆեյսբուքյան էջի էլեկտրոնային փոստի օգտագործումը տեղեկատվության տարածման նպատակով: Դրական է նաև, որ քոլեջը կարիքների գնահատման արդյունքում գործարկել է պաշտոնական կայքէջը, որը հնարավորություն կտա հաստատությանը ապահովել ՄԿԾ-ների իրականացման ընթացքի, ՈԱ գործընթացների և շահակիցների համար կարևոր այլ տեղեկատվության հրապարակայնությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ վերոնշյալ տեղեկատվական հարթակների օպտիմալ օգտագործումը քոլեջի, նրա շրջանավարտների, մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն տարածելու համար ավելի ճանաչելի կդարձնեն քոլեջը տարածաշրջանում, կնպաստեն արտաքին շահակիցների հետ կապերի ամրապնդմանը, դիմորդների թվի ավելացմանը:

Փորձագիտական խումբը նշում է շահակիցների հետ հետադարձ կապի հաստատման մեխանիզմների զարգացման անհրաժեշտությունը, նրանց ներգրավումը քոլեջի կրթական ծրագրերի բարելավման գործընթացներում: Փորձագիտական խումբը գտնում է, որ հատկապես

գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմների առավել ակտիվացումը կնպաստի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցների կարիքների լիարժեք բացահայտմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև ՄՈՒՀ-ի կողմից հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումների պարբերաբար կազմակերպումը՝ դասախոսական և ուսանողական համակազմերի ներուժի լայնորեն կիրառմամբ:

Միջոցառումների պարբերաբար իրականացումը վկայում է քոլեջի հասարակական պատասխանատվության մասին, նպաստում արտաքին կապերի, համագործակցության շրջանակների ընդլայնմանը, առավել ճանաչված և վստահելի դարձնում ՄՈՒՀ-ը տարածաշրջանում: Փորձագիտական խումբը հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման տեսանկյունից միաժամանակ կարևորում է կարճաժամկետ ծարգրերի իրականացվումը՝ կարիքի խորքային ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, ինչը կնպաստի ուսանողների թվի աճին և կարճաժամկետ կամ լրացուցիչ կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունների ընդլայնմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջն ունի հաշվետվողականության որոշակի մեխանիզմներ, հաշվետու է պետական գերատեսչություններին և շահակից կողմերին, ունի հասարակությանը գիտելիքներ փոխանցելու մեխանիզմներ, ակտիվորեն մասնակցում է միջոցառումների՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ռազմավարական հիմնախնդիրներից է զարգացնել արտաքին կապերը, խթանել քոլեջի գործունեության միջազգայնացումը, ստեղծել երկարաժամկետ համագործակցություն պետական և մասնավոր հատվածի հետ: Նպատակին հասնելու համար ՌԾ-ով դիտարկվել է գործատուների համար նպաստավոր պայմանների ստեղծումը, նրանց ներգրավումը պրակտիկաներում և վերապատրաստման ծրագրերում:
ՌԾ-ի համաձայն, շուկայի պահանջարկի վերհանումը Քոլեջը պլանավորվում է իրականացնել՝ համագործակցելով զբաղվածության կենտրոնների հետ: Ուսանողներին շուկայի պահանջները ՄՈՒՀ-ը պլանավորել է տեսանելի դարձնել՝ մասնակցելով աշխատանքի տոնավաճառներին: 2020-2024թթ. ՌԾ-ի վերոգրյալ ուղղությունների համար ՄՈՒՀ-ի կողմից կազմած

գործողությունների պլան-ժամանակացույցով սահմանված միջոցառումները ընդհանրական են, կատարման ժամկետների առումով բացակայում է կարճաժամկետ պլանավորում, իրականացման ընթացքը չի տրոհվում, այլ պարզապես նշվում է կամ ՌԾ-ի ողջ հատվածը՝ 2020-2024թթ, կամ ժամկետի դաշտում գրանցվում է «շարունակական» բառը: ՄՈՒՀ-ն ունի «Արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը, դրանց նպաստող մեխանիզմները» փաստաթուղթը, որում սահմանված են արտաքին կապերի և միջազգայնացման խնդիրները, նպատակներն ու դրանց հասնելու մեխանիզմները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը չունի արտաքին կապերով զբաղվող համապատասխան ենթակառուցվածքային միավոր, սակայն գործընթացը կանոնակարգված է՝ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքները ՄՈՒՀ-ում իրականացնում է տնօրենը (գործատուների ներգրավում, պրակտիկաների անցկացման համար համագործակցության և ներդրումների ապահովում, դրամշնորհային ծրագրերի փնտրում) և Կարիերայի պատասխանատուն (գործատուների և միասնական սոցիալական ծառայության հետ կապի ապահովում):

Բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում ՄՈՒՀ-ը համագործակցում է գործատուների հետ, այս պահին գործընկերների թիվը 16-ն է: Գործատուների հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է արտադրական պրակտիկաներ, դուալ կրթություն, ներդնում նոր մասնագիտություններ (օրինակ՝ «Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտության ներդնումը «Տավուշ տեքստիլ» ընկերության առաջարկով), ինչպես նաև արտալսարանային միջոցառումներ: Տարածաշրջանի գործատու գործընկերներից են «Տավուշ տեքստիլ»-ը, «Էկո Գարդեն արտադրական կորպորացիա»-ն, «Բերդի սորաններ» դենդրոպարկը, «Դարման հերբալ» ՍՊԸ-ն, «Այգեձոր» ՍՊԸ-ն և այլն:

ՄՈՒՀ-ի փորձառությունը միջազգայնացման գործընթացում վերաբերում է դուալ կրթությանը: 2019 թվականից ՄՈՒՀ-ը, ուսումնասիրելով Գերմանիայի դուալ կրթական համակարգը, ներդրել է այն երկու մասնագիտությունների՝ «Անասնաբուժության» և «Գյուղատնտեսության մեքենայացում» մասով: Գերմանական փորձի ուսումնասիրման նպատակով կազմակերպվել է ՄՈՒՀ-ի տնօրենի այց Գերմանիայի Դաշնության ՄԿՈՒ հաստատություններ և արտադրական ձեռնարկություններ: MAVETA (Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում) ծրագրի շրջանակում փորձի փոխանակման նպատակով տնօրենը մեկնել է Շվեյցարիա՝ այդ երկրի դուալ համակարգի մոդելին ծանոթանակու համար: «Էրազմուս+» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ ՄՈՒՀ-ը դեռևս քայլեր չի ձեռնարկել: Ունի պայմանագիր Էստոնիայի հետ, սակայն ուսանողների շարժունություն ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացնում:

ՄՈՒՀ-ը պայմանագրեր է կնքել և համագործակցում է նաև մի շարք բուհերի և այլ կազմակերպությունների հետ (ԵՊՀ, ՀԱԱՀ, ՀՊՏՀ, «Ֆերտի» ԲԿՀԿ, «Վիններթ Բերդ», «ՍՕՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամ, «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամ, «Հույսի կամուրջ» ՀԿ, «Ռեստարտ Իջևան» ՀԿ և այլն): Համագործակցության շրջանակներում ՄՈՒՀ-ը իրականացնում է ճանաչողական և մասնագիտական այցեր ուսումնական հաստատություններ, ապահովում դասավանդողների և ուսանողների մասնակցությունը այդ կազմակերպությունների կողմից անցկացվող վերապատրաստումներին, սեմինարներին, ծրագրերին:

Համագործակցելով մի շարք հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ «Վարդանանց ասպետներ» հայ-ամերիկյան հայրենասիրական ՀԿ-ի և Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հետ, ինչպես նաև ներգրավվելով միջազգային ծրագրերում, ինչպիսին է MAVETA-ն, ՄՈՒՀ-ը ձեռք է բերել ռեսուրսներ և իրականացրել ենթակառուցվածքների վերանորոգման աշխատանքներ։

Ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների 72% և վարչական աշխատակիցների 11% տիրապետում են ռուսերենի, իսկ դասավանդողների և վարչական աշխատակիցների անգլերենի իմացությունը ռուսաց լեզվի իմացության համեմատ 1,5-2 անգամ ցածր է։ Ուսանողների 20-50% տիրապետում են օտար լեզուների (անգլերեն)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը ուսանողների շրջանում առկա է, իսկ ՄՈՒՀ-ն ունի օտար լեզու դասավանդող փորձառու մասնագետների կարիք։ ՌԾ գործողությունների պլան-ժամանակացույցով նախատեսված է դասախոսական անձնակազմի կարիքների վերհանում, բայց օտար լեզուների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ քայլեր չեն պլանավորվում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ՄՈՒՀ-ի նախաձեռնությունները բոլոր մասնագիտություններով գործատուների ներգրավման ուղղությամբ, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում տնտեսությունների թիվը համեմատաբար փոքր է, գործող ձեռնարկությունների մեծ մասը փոքր բիզնեսներ են։ Այս համագործակցությունը նպաստում է պրակտիկաների կանոնավոր կազմակերպմանը և հանդիսանում է դուալ կրթության իրականացման կարևոր հիմք։
Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ակտիվ համագործակցությունը թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների, թե՛ մասնավոր հատվածի հետ։ Այս գործընկերության շնորհիվ ՄՈՒՀ-ը ոչ միայն կարողանում է արդյունավետորեն իրականացնել գործող ՄԿԾ-ները, այլև նախաձեռնել և ներդնել նոր մասնագիտություններ՝ արձագանքելով տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին։

Թեև ՄՈՒՀ-ում բացակայում է արտաքին կապերով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը, փորձագիտական խումբը բարձր է գնահատում այն հանգամանքը, որ հաստատությունը որդեգրել է արտաքին կապերի ընդլայնման հստակ քաղաքականություն։ Տնօրենի և կարիերայի կենտրոնի հետևողական աշխատանքը նպաստում է ՄՈՒՀ-ի համագործակցության ընդլայնմանը, ինչը ապահովում է քոլեջի շարունակական զարգացումը և բարելավումը։ Փորձագիտական խումբը խրախուսում է այս մոտեցումը և կարևորում միջազգային ծրագրերում քոլեջի մասնակցության հետագա հնարավորությունների ընդլայնումը։ Միևնույն ժամանակ, խմբի գնահատմամբ, միջազգային ծրագրերում ներգրավվելու հիմնական խոչընդոտը կարող է հանդիսանալ անգլերեն լեզվի ոչ բավարար իմացությունը։ Այս խնդիրն հաղթահարելու նպատակով խումբը կարևորում է թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար լրացուցիչ օտար լեզվի դասընթացների կազմակերպումը։ Այս դասընթացները պետք է մշակվեն հստակ մեթոդաբանությամբ՝ ապահովելով լեզվական հմտությունների շարունակական զարգացումը՝ խթանելով միջազգային ծրագրերում արդյունավետ մասնակցության հնարավորությունները։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ն ունի արտաքին կապերի զարգացման քաղաքականություն, կարևորում է համագործակցությունը գործատուների հետ և ակտիվորեն

համագործակցում տեղական և որոշակիորեն նաև միջազգային կազմակերպությունների հետ, հետևում շուկայի զարգացումներին, աշխատում ներդնել միջազգային փորձը, փորձագիտական խումբը գտնում է, որ Բերդի բազմագործառութային պետական քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Բերդի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին փորձագիտական խումբը գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2020թ.-ից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել որոշակի փաստաթղթային բազա: 2020թ. Քոլեջը հաստատել է «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որը նկարագրում է Քոլեջում որակի ապահովման քաղաքականությունը, խնդիրները, իրականացման ընթացաքայլերը և ուղղությունները՝ կառավարման և վարչարարության, կրթական ծրագրերի, դասախոսական/վարպետաց կազմի, դասավանդման և ուսումնառության, ուսումնական ռեսուրսների և ուսումնաօժանդակ ծառայությունների, հետազոտական գործունեության, միջազգայնացման, հասարակական պատասխանատվության և հանրային կապերի որակի ապահովման ուղղություններով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2020թ. ՈԱ համակարգի ներդրման աշխատանքները սահմանափակվել են միայն փաստաթղթային բազայի ձևավորմամբ: Այնուհետև որակի ներքին ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկվել են 2024թ.՝ պայմանավորված ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքով:

2024թ. ՄՈՒՀ-ը մշակել է ՈԱ կենտրոնի կանոնակարգը, որի համաձայն որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքները համակարգում և վերահսկում է կենտրոնի՝ երեք հոգուց բաղկացած խորհուրդը, ձևակերպվել են խորհրդի ու երեք հանձնախմբերի գործառույթները: ՄՈՒՀ-ում գործում են հետևյալ երեք հանձնախմբերը՝ ուսումնամեթոդական, մշտադիտարկումներն անցկացնող/տեխնիկական/, վերլուծության և որակի բարելավման /աշխատանքները պլանավորող/, որոնցից երկուսի պատասխանատուները միջին մասնագիտական և նախնական մասնագիտական գծով տնօրենի տեղակալներն են, իսկ երրորդը՝ տնօրենի օգնականը, որոնք սահմանված աշխատանքների կատարման համար ստանում են հավելավճար: ՈՆԱ կենտրոնի/խորհրդի կողմից մշակված 2024-2025թթ տարեկան պլանի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱ գործընթացը դեռևս լիովին ընկալված չէ աշխատակիցների կողմից: Աշխատանքային պլանը ներառում է հետևյալ բաժինները՝ խնդիրներ, օրակարգային հարցեր, ժամկետ, պատասխանատուներ և նշումներ:

Անհրաժեշտ է նշել, որ պլանում նշված գործողությունները առավելապես բխում են աշխատակիցների հիմնական պատասխանատվության շրջանակից։ Օրինակ՝ որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնման համար նախատեսված է իրականացնել ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության հստակեցում, առարկայական ծրագրերի և ուսպլանների վերաբերյալ դիտարկումների ներկայացում և այլն։ Աշխատանքային պլանում ակնկալվող արդյունքները, կատարման ժամկետները հստակ սահմանված չեն։ Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ՈԱ համակարգը դեռևս կենտրոնացված չէ դասավանդման, կառավարման ուղղությամբ տվյալների վերհանման և այլ ուղղություններով տվյալների հավաքագրման և բարելավման գործընթացների վրա, այլ սահմանափակվում է դեռևս առկա փաստաթղթերի վերանայման լավարկման գործընթացներով։ ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցները լիարժեքորեն ներգրավված չեն։

Խորհուրդն իր աշխատանքների իրականացման համար ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով, առանձին աշխատասենյակով։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ ՈԱ պատասխատուի հաստիքը ՄՈՒՀ-ում դեռևս համալրված չէ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հանձնախմբերը երկու ամսվա ընթացքում հիմնականում կենտրոնացել են հարցումների հարցաշարերի վերանայման և որոշ հարցումների իրականացման վրա, սակայն անհրաժեշտ է նշել, որ հարցաշարերի մշակման հստակ մեթոդաբանություն ՄՈՒՀ-ում առկա չէ։ Քոլեջը ներգրավել է ներքին շահակիցներին՝ իրականացնելով ուսանողի կողմից դասընթացի արդյունավետության գնահատման, կրթական ծրագրի գնահատման և վարպետների՝ գործընկերոջ կողմից գնահատման հարցումներ։ Թեև հարցումների քանակական վերլուծություններն առկա են, դրանցում բացակայում է վերհանված խնդիրների հստակ և համապարփակ ներկայացումը։ Հարցաշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում ներառված հարցերը հաճախ ընդհանրական են և որոշ դեպքերում չեն համապատասխանում թիրախ խմբերի առանձնահատկություններին։ Մասնավորապես, ուսանողների կողմից կրթական ծրագրի գնահատման հարցաթերթի որոշ հարցեր պահանջում են պարզեցում, քանի որ բարդ են ընկալման համար և ենթադրում են ոչ հստակ պատասխաններ, օրինակ՝ «Ձեր ստացած կարողություններն ու հմտությունները բավարար են արդյոք արդյունավետ գործունեության համար», «Տեղեկացված եք արդյոք ՄԿԾ-ների շրջանակում ներկայացված ելքային վերջնարդյունքների մասին» և այլն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթերը հիմնականում 2020 թվականի նմուշներն են, որոնք սկսել են վերանայել՝ կատարելով որոշակի խմբագրական փոփոխություններ։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց նաև, որ ՈԱ հանձնախմբերի պատասխանատուները ևս համակարծիք էին հարցաշարերի ոչ թիրախային լինելու հարցում և գտնում էին կրկին վերանայելու անհրաժեշտություն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ հարցումը ՈԱ աշխատանքների իրականացման միակ գործիքն է։ ՄՈՒՀ-ն ունի նաև ՈՆԱ էլեկտրոնային փաթեթ, որը քոլեջը անվանել է ձեռնարկ-ուղեցույց։ Դրանում ներկայացված է Բերդի բազմագործառութային պետական քոլեջի որակի ներքին ապահովման համակարգը ներկայացնող փաստաթղթային հենքը, որոնց մի մասը նոր է մշակվել։

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում

հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, սակայն սակավ են վերլուծությունների արդյունքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը համակարգվել է ՈՆԱ հանձնաժողովի պատասխանատուների և կարիերայի ուղղորդման պատասխանատուի կողմից: Կազմված ինքնանվերլուծությունը որոշակիորեն է տարածվել շահակիցների շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները արտացոլված են ինքնավերլուծությունում, ինչպես նաև երևում է նրանց մասնակցությունը ԻՎ աշխատանքներում:

Քոլեջի ՈՆԱ թափանցիկության ապահովման համար դեռևս չունի աշխատանքների արդյունքների հրապարակման մեխանիզմներ, մասնավորապես՝ պաշտոնական կայքէջի նոր ներդրված լինելու հանգամանքով պայմանավորված:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ Քոլեջը քայլեր է ձեռնարկել ՈԱ համակարգի ներդրման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, նշվում է, որ համակարգի ներդրման նպատակով տարբեր ժամանակահատվածներում մշակված կանոնակարգող փաստաթղթերն ու գործիքները միշտ չէ, որ ապահովել են սահմանված նպատակների լիարժեք իրագործումը: Հատկապես հարցաշարերում ընդգրկված բարդ ձևակերպումները չեն նպաստել օբյեկտիվ պատկերի ստացմանը:

Քոլեջը կարիք ունի բարելավելու որակի ապահովման գործընթացները՝ նախ գնահատելով ՈԱ համակարգի ներկա վիճակը և վերհանելով առկա խնդիրները: Այս գործընթացի հիմքում պետք է լինի հստակ գործողությունների պլան, որը կներառի ՈԱ գործընթացների վերանայման, նոր գործընթացների իրականացման և դրանց արդյունավետության մշտադիտարկման բոլոր փուլերը: Փորձագիտական խումբը կարևորում է ՈԱ գործընթացների հստակ պլանավորումը, որտեղ կերևան պլանավորվող գործողությունները, ակնկալվող վերջնարդյունքները, կատարման ժամկետները և պատասխանատուները: Նման մոտեցումը կնպաստի ՈԱ գործընթացների համակարգային կազմակերպմանը:

Խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ստեղծել է ՈԱ կենտրոն և կենտրոնացրել իր ներուժը ՈԱ գործընթացների վրա: Այնուամենայնիվ, նշվում է, որ ՈԱ կենտրոնի մեկ պատասխանատուի առկայությունն ու նրա անկախությունը կարող է էապես բարձրացնել աշխատանքների արդյունավետությունը՝ հավաստի տվյալների հավաքագրման, վերլուծության և դրանց հիման վրա որոշումների կայացման և բարելավման ուղղությամբ գործողությունների իրականացման տեսանկյունից: Փորձագիտական խումբը միաժամանակ կարևորում է ՈԱ գործընթացի պատասխանատվություն ունեցող անձանց մասնագիտական զարգացումը, որը կապահովի գործընթացների ճիշտ ընկալմանը և նպատակներին հասնելու ռազմավարության ներդրմանը:

Կիրառվող հարցաշարերի մասով խումբը կարևորում է դրանց վերանայումը և արդիականացումը՝ համապատասխանեցնելով թիրախային խմբերի առանձնահատկություններին: Հարցաթերթերի մշակման համար անհրաժեշտ է ներդնել հստակ մեթոդաբանություն, որը պետք է ներառի հարցաթերթերի կազմման նպատակների հստակ սահմանում, թիրախային խմբերի առանձնահատկությունների հաշվառում, պարզ և թիրախային ձևակերպումների մշակում, ինչպես նաև չափելի և օբյեկտիվ հարցերի կառուցում: Այս

մեթոդաբանությունը հնարավորություն կտա հավաքագրել օբյեկտիվ և կիրառելի տվյալներ, որոնք էական նշանակություն կունենան բարելավման գործընթացների համար։

Առավել օբյեկտիվ և բազմակողմանի տվյալների հավաքագրման նպատակով Քոլեջը կարող է կիրառել տարբեր գործիքներ, ինչպիսիք են գործատուների հետ կլոր սեղան-քննարկումները, ներքին շահակիցների հետ ֆոկուս խմբային հանդիպումները, դասընթացների դիտարկումների արդյունքները, ուսումնական ռեսուրսների գնահատումը, ուսանողների առաջընթացի մշտադիտարկումը և այլն։ ՈԱ գործընթացների պատասխանատուները կարող են ապահովել տվյալների առավել օբյեկտիվ վերլուծություն՝ նույն թեմայի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման միջոցով՝ ապահովելով վերլուծության համապարփակությունը։

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ԲԲՊՔ-ում ՈԱ համակարգը դեռևս ներդրման փուլում է, դեռևս ՄՈՒՀ-ի պատկերացումները հստակ չեն ՈԱ համակարգի զարգացման ուղղությամբ, առկա են ՈԱ գործընթացները իրականցնելու սահմանափակ գործիքակազմ, իրականացված հարցումները դեռևս մեծ արդյունավետություն չունեն, առկա է ՈԱ գործընթացներն իրականացնող անձանց կարողությունների զարգացման անհրաժեշտություն, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում Չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: ԲԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

_____

Նարինե Միրականյան
Փորձագիտական խմբի ղեկավար

24-ը փետրվարի 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Նարինե Միրականյան՝ 2006թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկականպետական մանկավարժական համալսարանի «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» բաժինը (մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում)։ Մանկավարժական գիտությունների թեկնածու, է /2016թ./։ 2006-2014 թթ. աշխատել է դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ։ 2014-2016թթ. աշխատել է ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի Բնագիտամաթեմատիկական առարկաների և մանկավարժության գիտահետազոտական բաժիններում՝ որպես գլխավոր մասնագետ։ 2019-2020 թթ. Աշխատել է Հյուսիսային համալսարանում՝ որպես որակի ապահովման վարչության պետ։ 2020թ.-2021թթ. եղել է ՀՀ կրթության տեսչական մարմնի «ԻԳործ» ծրագրի մասնակից։ 2021-2022թթ. ՀՀ կրթության տեսչական մարմնի' ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատմա վարչության փորձագետ։ 2023-2024թթ. ՀՀ էկոնոմիկային նախարարություն «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրերի ղեկավար։ Ներկայումս ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետն է։ 18 և ավելի գիտամեթոդական հոդվածների հեղինակ է։ 2019թ.-ից ներգրավված է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ բուհերի եւ քոլեջների հավատարմագրման գործընթացներում՝ որպես փորձագետ։

Նաիրա Արշակյան՝ 1985-1990թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի դեղագործական ֆակուլտետում, ստացել է պրովիզորի որակավորում։ 1990-1991թթ.սովորել է Երևանի N1 դեղատանը (ինտերնատուրա)։ 2016-2018թթ. եղել է Երևանի պետական բժշկական համալսարանի ուսման որակի գնահատման և ապահովմանկենտրոնի ավագ մասնագետ։ 2016-2022թթ. եղել է Երևանի պետական բժշկականհամալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ։ 2019-2022թթ. եղել է Եվրասիա Միջազգային Համալսարանի Ֆարմացիայի ամբիոնի վարիչ։ 2022թ.-ից մինչ այժմ Երևանի պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոնի դասախոս է։

Ելենա Մարտիրոսյան՝ 2002 թվականին ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի Ռուսաց լ. և գրակ., անգլ.լ. ֆակուլտետը։ 2015-2017 թվականներին եղել է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում ռուսաց լեզվի դասավանդող։ 2017 թվականից առ այսօր աշխատում է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում՝ որպես տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ։

Ալբերտ Թադևոսյան՝. 2020-2023 թթ. սովորել է Երևանի պետական հումանիտար տեխնիկական քոլեջի «Ֆինանսներ» մասնագիտությամբ։ 2023թ. ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ֆինանսներ» բաժին։ Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	03.11.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	14:00	15:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի տնօրենի տեղակալների հետ	15:10	16:10	60 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	16:20	18:30	140 րոպե

	04.11.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ցիկլային հնաձնաժողովների և մասնագիտական ամբիոնների վարիչների հետ	09:30	10:30	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական անձնակազմի հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	11:50	12:30	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղ. պատ.գործավար, գրադարանավար, հաշվապահ, լաբորանտ, կադրերի բաժնի վարիչ,տեղ.վերլուծ.բաժին)	13:50	14:50	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	15:00	15:50	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:00	17:00	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:30	80 րոպե

	05.11.2024թ			Մեկնարկ	Ավա.	Տևող.
1.	Դասալսումներ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ուսանողների հետ			10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			11:40	12:20	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի փակ քննարկումներ			12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում «Զբոսաշրջություն ըստ(ըստ ճյուղերի)» կրթական ծրագրի	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի պատասխանատուի	Հանդիպում «Խոհարարական գործ» կրթական ծրագրի	13:40	14:40	60 րոպե

	պատասխանատուի և դասախոսների հետ	և դասախոսների հետ	պատասխանատուի և դասախոսների			
6.	Հանդիպում«Զբոսաշրջություն ըստ(ըստ ճյուղերի)» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում«Խոհարարական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	14:50	15:50	60 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ			16:00	16:50	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:00	18:30	90 րոպե

	06.11.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողութ.
1.	Հանդիպում ՈԱ հանձնաժողովի անդամների հետ	09:30	10:20	50րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:30	11:10	40 րոպե
3.	Փորձագիտական խմբի հետ բաց հանդիպում	11:20	11:50	30 րոպե
4.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	12:00	13:00	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:00	50 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	14;10	15:00	50 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	15:10	15:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Տնօրենի և ստորաբաժանումների հաշվետվություններ վերջին 3 տարիների համար	2
2.	Պաշտոնների անձնագրեր	2
3.	Տարեֆիկացիա /վերջին 3 տարիների/	2
4.	Նախահաշիվներ և կատարողականներ /վերջին 3 տարիների/	2
5.	ԿԽ և մանկավարժական նիստերի արձանագրություններ	2
6.	Քննական հարցատոմսեր, հետազոտական աշխատանքներ	3
7.	Ներկայացված 3 ՄԿԾ-ների ամբողջական փաթեթներ	3
8.	Առաջադրված 3 ՄԿԾ-ների շրջանակներում տրամադրված առաջադրանքներ, ռեֆերատների օրինակներ	3
9.	ՈւԽ աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	4
10.	Շրջանավարտների բազա	4
11.	Դասի պլաններ	5
12.	Պրակտիկայի լրացված օրագրեր 3 կրթական ծրագրերի շրջանակներում	3
13.	Այլ կրթական ծրագրերի պետական քննությունների հարցատոմսեր	3
14.	Իրավիճակային խնդիրների օրինակներ, անհատական աշխատանքների օրինակներ, վերլուծական աշխատանքներ, զեկույցներ	3
15.	Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվություններ	3
16.	Ըստ ՄԿԾ-ների լիցենզիոն տեղերը և ուսանողների քանակը	4
17.	Շրջանավարտների բազա՝ ըստ մասնագիտությունների /վերջին 5 տարիների/	4
18.	Ներառական կրթություն ստացող ուսանողների քանակ	4
19.	Ուսանողի ուղեցույց	4
20.	Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների ժամանակացույց	4
21.	Դասախոսի մրցույթի արձանագրություն, հարցաշար	5
22.	Մրցութային կարգով ընդունված դասախոսական թվաքանակ	5
23.	Դասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի քանակ	5
24.	Ուսանողների շրջանում դասախոսներից բավարվածության հարցաշար, վերլուծություն	5
25.	Գործատու դասախոսների քանակ	5
26.	Փաստաթուղթ դասալսումների անցկացման, դրանց արդյունքների վերլուծման , եզրակացությունների վերաբերյալ	5
27.	Դասախոսական կազմը՝ ըստ 2024-25թթ.	5

28.	Մասնագիտական և մեթոդական վերապատրաստված դասախոսական կազմի տվյալներ վերջին հինգ տարվա համար՝ նշելով նաև վերապատրաստող կազմակերպությունը, թեման, ժամանակահատվաը, դասախոսական կազմի անուն-ազգանունը, դասավանդող մոդուլները, առարկանները	5
29.	Դասալսումների արձանագրություններ	5
30.	Ինքնագնահատման թերթիկ, Նախանական գնահատման թերթիկ	6
31.	Որևէ փաստաթուղթ լաբորատորիաների հագեցվածության վերաբերյալ	7
32.	Լսարանների քանակ, զույքացուցակ	7
33.	Տարբեր լաբորատորիաների, կաբինետների զույքացուցակներ	7
34.	Գործատուների ցանկ, որոնց հետ համագործակցում է քոլեջը	9
35.	Գործատուների հետ ունեցած պայմանագրեր, և այլ ՄՈՒՀ-երի հետ եղած հուշագրեր և պայմանագրեր	9
36.	Գործընկեր կազմակերպությունների ցանկ	9
37.	Շահակիցների բավարարվածության հարցումների օրինակ	10
38.	ՈԱ աշխատանքային պլաններ հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. Լաբորատորիաններ,
3. Մասնագիտական կաբինետներ
4. Գրադարան
5. Վարչական սենյակներ
6. Մարզադաշտ, մարզադահլիճ
7. Դահլիճ
8. Բակային տարածքներ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՄՄՆ - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԲԲՊՔ – Բերդի բազմագործառութային պետական քոլեջ
ՄԿԾ – մասնագիտության կրթական ծրագիր
ՈԱ – որակի ապահովում
ՈԱՇ –որակավորումների ազգային շրջանակ
ՈՆԱ – որակի ներքին ապահովում
ՈՆԱԿ – որակի ներքին ապահովման կենտրոն
ՌԾ – ռազմավարական ծրագիր
ՊԿՉ - Պետական կրթական չափորոշիչ
ՀՀ ԱՕ - Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրք
ՈԱԱԿ - Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈՒԽ - Ուսանողական խորհուրդ
ՊԻԳԲ – պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
ՄՄԾ – Միասնական սոցիալական ծառայություն
ԲՈՒՀ - Բարձրագույն ուսումնական հաստատություն
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՈՒԱ - Ուսումնառության արդյունք
ՊՈԱԿ - Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԿՈՒԶԱԿ - Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
ՈՒՄ - Ուսումնական մաս
ՀՀ ՆԳՆ ՓԾ - Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայություն
ԿՏԱԿ – կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն